



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Լ. ՊԱՀԵԼԵՅԵՎ

ԾՐԾՐ



ՊԵՏՐՈՎ  
ՅԵՐԵՎԱՆ

1934

卷之三

L. ՊԱՆՏԵԼԵԿ


A  $\frac{7}{8420}$

ԵՐԱՐ



ԹԱԳՄ. ՀԱՅ. ՄԱԶՄԱՆՅԱՆ

19223



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

1934թ.

ՅԵՐԵՎԱՆ



Գառ. Խմբագիր՝ Ա. Հայրյան. Թարգմանիչ՝ Հ. Մողմանյան.  
Տեխ. Խմբագիր՝ Ս. Գասպարյան. Սրբագրիչ՝ Ա. Դայան.  
Գատվեր 200. Գլավլիա 8433 Հրամ. 2246  
Տիրած 8000

Մանկության որերում յես հովիվ եյի և  
հոկում եյի կալվածատեր Լանդիշևի արտա-  
սահմանյան վոչխարները։ Հետո Նիկոլաև քա-  
ղաքում առաղջապործական աշխատանք եյի  
կատարում։ Հետո ինձ վերցրին նախատորմիդիզ։  
Հետո հեղափոխություն։ Հետո կովեցի իհար-  
կե։ Հետո ինձ գրելու կարդալ սովորեցրին։ Հե-  
տո—թվաբանություն։

Իսկ այժմ յես Բուլյոննու անվան անաս-  
նաբուծական խորհունտեսության վարիչն եմ։  
Իսկ թե ինչու յես Բուլյոննու անօտնաբուծա-  
կան խորհունտեսության վարիչն եմ, կպատմեմ  
հետո։ Այժմ յես ուզում եմ պատմել մի բոլորո-  
վին փոքրիկ, չնչին դեպք, թե մի անդամ ուաղ-  
մաճակատում ինչ պատահեց ինձ հետ։

Այդ պատահեց քաղաքացիական պատե-  
րազմի ժամանակ։ Յես Բուլյոննու հեծյալ բա-  
նակի մարտիկ եյի և գտնվում եյի ընկեր  
Զավարուխինի հատուկ ջոկատում։ Այն ժամա-  
նակ հասակս մեծ ել չեր, —քսանչորս տարի-  
կան եյի։

Մեր դիմիզիզիան գտնվում եր փոքրիկ Տիրի  
գյուղում։

Մեր դործը վատ եր. ձախից Շկուրոն եր  
նեղում, աջից—Մամոնտովը, «իսկ առջևից շան  
վորդի դեներալ Ռևմագայն եր դրոհում:

Նահանջում եյինք:

Հիշում եմ, յես յերկու որ չքննեցի: Հիշ-  
ում եմ, հազիվ եյի քայլում: Ձախ վոտիս վրա  
կոշտուկներ առաջացան: Այն ժամանակ յերկու  
վոտներս ել վրաս եյին:

Հա՛, հիշում եմ, դարբասի մոտ նստել եմ  
նստարանի վրա և հանում եմ ձախ վոտիս կո-  
շիւր: Քաշում եմ կոշիկս ու մտածում.—

«Ե՛հ, հիմա վո՞նց պիտի քայլեմ: Ախր  
տես, հիմար, ի՞նչ բշտիկներ են վոտիդ»:

Յեզ հենց այդ բոպեյին մեր շտարից սուր  
հանդակ յեկուվ:

— Տրաֆիմով, — զոռում ե, — շուտ, զնա  
շտար, ընկեր Զավարուխինն ե պահանջում:

— Լավ, — ասում եմ: — թյո՛ւ:

Վերցրի կոշիկս ու վոտափաթաթանս և  
մի վոտով—դեպի շտար:

«Սա ի՞նչ սատանայի բան ե, — մտածում եմ  
յես: Մարդու վոտները ծալվում են, բայց արի  
ու վազիր փոքրիկի պես»:

— Հա՛, — ասում եմ: — Բարե, կոմիսար:  
Ինչո՞ւ յեզ կանչել:

Զավարուխինը նստել ե լուսամուտի վրա և  
վերնաշապկի կոճակներն ե հաշվում: Նա միշտ  
կոճակներն եր հաշվում: Զղային եր: Դոնեցի  
շախտյորներից:

— Նստի՛ր, Տրաֆիմով, —ասում ե, —հրե՛ն  
աթոռը:

— Լավ, —պատասխանեցի ու նստեցի: Կո-  
չիկս ու վուափաթաթանս դրեցի ծնկիս: Իսկ  
նու լուսամուտից վեր կացավ, շոշափեց կոճակն  
և ասում ե. —

— Ա՛յ, —ասում ե, —Տրաֆիմով... մի մեծ  
պործ ունեմ քեզ հետ: Խնդրեմ ինձ խոսք տաս,  
մոր յեթե հարկավոր ե, կմեռնես հեղափոխու-  
թյան համար:

Յես մեր կացա աթոռից: Կկոցեցի աչքերս:  
Վուափաթաթանս զեն դժենցի:

— Լա՛վ, —ասում եմ, —կմեռնեմ:

— Հաղնվի՛ր:

Կոշիկս հառդա: Կոշտուկներս կոշիկիս մեջ  
խոթեցի: Կոշիկս քաշեցի վոտիս: Կրունկով  
դոմինցի:

— Ճե՛ս, —ասում ե: Յեվ արկղից հանում ե  
մի ծրաբ: Ահագին, թղթի մի ծրաբ, կնքամոմի  
յերկու կնիքով: — Ահա, ստացի՛ր: Ձի նստիք  
և ոլացիր մինչև Լուգանսկ, հեծյալ բանակի  
շտաբը: Այս ծրաբն անձամբ կտաս ընկեր Բու-  
դյոննուն:

— Լավ, —ասում եմ: —Կտամ: Անձամբ:

— Բայց իմացիր, Տրաֆիմով, —ասում ե  
ընկեր Զավարուխինը, —տիսուր ե մեր վիճա-  
կը, կորած ենք... Զախից Շկուրոն ե նեղում,  
աջից Մամոնտովը; Իսկ առջեկից Ռւլագայն ե գը-  
րահում: Վտանգավոր ե քո ստացած հանձնարա

րությունը: Յես քեզ ուղղակի դեպի մահ և՛մ  
ուղարկում:

— Ի՞նչ արած, —ասում եմ, —այլավես ել  
թող լինի: Պատրաստ եմ...

— Հնարավոր ե, —ասում ե, —վոր քեզ  
դիպչի սպիտակ-գվարդիական գնդակը, զուցե  
և կենդանի բռնեն: Ուրեմն տես, չե՞ վոր այս  
ծրարում կարեորագույն ոպերատիվ տեղեկու-  
թյուններ կան:

— Լավ, —ասում եմ: — Զեմ առ ծրարը:  
Կայրվեմ նրա հետ միասին:

— Մայրահեղ դեպքում, —ասում ե, —վո-  
չընչացըրու: Խսկ յեթե լուզանսկ համանես, տես  
քեզ տեղեկությունների կարճ բովանդակու-  
թյունը. —ձախից Շկուրոն ե նեղում, աջից Մա-  
մոնտովը, խսկ առջեկց Ռւլագայն և հարձակ-  
վում: Հարկավոր ե վերջինիս խմել թիկունքից  
և ամեն դուզ աղահել կենտրոնը, վորպեսզի կա-  
զակների անջատ զորամասերը չմիանան: Մեր  
դիվիզիայում այսքան ու այսքան մարտիկներ  
կան: Թշնամին յերկու անդամ ավելի ունի: Ա-  
ռանց շտապ ոգնության կորած ենք:

— Հասկանալի յե, —ասում եմ: Կորած  
ենք: Տուր ծրարը, ընկեր...

Վերցըրի ծրարը, շոշափեցի, շապկիս կո-  
ճակները քանդեցի, ծրարը դրի ծոցու:

— Մնաս բարով, կոմիսար:

— Գնաս բարով, Տրաֆիմով, —ասում ե  
նա, —կենդանի' վերադարձիր:

Դուքս վազկցի: Կկոցեցի տչքերս: Կըուն-  
կըս ելի խփեցի հատակին:

«Ո՞ֆ, —մտածում եմ, —միայն թե զահըու-  
մար կոշտուկը չփչացնի գործը»:

Վաղում եմ արտօտատեղ: Այնտեղ ման են  
դալիս մեր ձիերը, գլուխները կախած արա-  
ծում:

Ըստրեցի ամենալավ նժույգին, —«Նեղ-  
րին»: Հրաշալի նժույգ եր, ավստրիացիներից  
զերի վերցրած: Շտկեցի թամքը, նստեցի,  
կոտցա, կըունկներովս խփեցի փորին ու թառ:

Սլանում ե իմ Նեղըը ինչպիս կայծակ:  
Սլանում ենք խճուղով, լորենիների տա-  
կով: Լորենիներն աղմկում են, ականջներս  
զժժում: Մի բոպե, —մի վերսու: Իսկ իմ Նեղըը  
միայն հրճվում ե, փնչում, գլուխը թափա-  
հարում... Կրակ ե:

Ահա դոփյուններով անցանք կամուրջը...

Ահա դարձանք դեպի այրված մի գյուղ...

Ահա ոլանում ենք անտառի միջով...

Մութ ե... Խոնավ... Յես բոպե առ բոպե  
րաբծրացնում եմ գլուխս, արևն եմ փնտում:  
Արեավ հեշտ ե ճանապարհը գտնել: Բարձրաց-  
նում եմ գլուխս, —վոստերը խփում են դեմքիս:  
Նորից կռանում եմ, փարում Նեղըի բաշը և  
նորից չնչում

Հանկարծ, հասկանո՞ւմ եք, վերջանում ե  
անտառը: Առջևս ինչ-վոր գետ ե յերեսում: Ի՞նչ  
գետ ե, դրողը տանի: Անսպասելի յեր:

Յեղերքով դեպի աջ եմ սլանում: Կամուրջ

եմ վնտոռում։ Զկա։ Դես-դեն եմ ընկնում, դեպի ձախ թռչում։ Զկա։

Գետը լայն է, մթին, —հետո իմացա, վորդա Դոնեց գետն է։

— Ո՞ֆ—ասում եմ : — Փորձանք ե, ելի։ Հաստա, Նեղը, մտիր ջուրը։

Կամացուկ իջնում եմ ժայռից և ձիս ուղղում դեպի ջուրը։ Ձին մոտենում և ջրին։

— Հապա՛, —ասում եմ : Մի փոքր ասպանգակեցի։ Սահճն ել քաշեցի։

Նեղը չշարժվեց։  
— Դե՛ռ, —ասում եմ, —հիմար։ Վախեցա՞ր ըրից։

Կանզնած եռ կողերն ե շարժում : — Ականջներն ել են շարժվում։

Այստեղ յես, հիմարս, չարացա։ Հենց կողերին խփեցի ու շվացրի։ —

— Հապա որացի՞ր . . .

Տեղից թռավ Նեղը։ Ննտվեց ուղղակի ջրի մեջ։ Ռւղղակի խորը տեղ։

Ել չդիտեմ, թե ինչպես եմ իարողացել վոտներս հանել ասպանդակնեցից, միայն թե ջրի յերեսն յելա ու տեսնում եմ, վոր մենակ լողում եմ գետում, իսկ ինձնից վոչ հեռու, յերկու սաժենի վրա ողակներ են ծածանվում և սպիտակ պղպջակներ յերեւում։

Այս, իոլճացի ձիուս . . . տասնեհինդ ըոսկ լողում եյի ողակների շուրջը, սպասում եյի, վոր ահա-ահա դուբս կգա Նեղը։ Սակայն նա դուբս չեկավ։ Զրասույդ յեղավ։

Այստեղ յև յերեխայի պես մղկուացի ու  
լողացի դեմի մյուս ափը:

Դուքս յեկա: Ձուքը հոսում ե ինձնից, վոնց  
վոր ջրահեղձից: Գլխարկս կորցրի ջրի մեջ:  
Կոշիկներս փօվեցին: Այդպիսի փափուկ կո-  
շիկներով հեշտ ե քայլելը:

Գնում եմ նեղ արահետով:

Արեք տաքացնում ե ձախ թուշս, ուուրեմն Լու-  
զանսկը աջ կողմն ե, քթիս կողմը: Գնում եմ  
քթիս ուղղությամբ: Ի միջի այլոց ավելի և ա-  
վելի յեմ չորանում: Կոշիկներս ել են չորա-  
նում, ավելի և ավելի փոքրանում: Սկսում են  
սեղմել վոտներս:

Հանկարծ փորտեղից վորտեղ մի մարդ:  
Զինվորական չե: Գեղջուկի հագուստով: Ինչ-  
վոր սարսափելին ե:

— Բարե, — ասում ե, — ապարոն զինվոր:

Ու ծիծաղում ե:

Յես ասում եմ . . .

— Ի՞նչ ես ծիծաղում:

Մի քիչ վախեցա: Զե՞ վոր քեֆ չեմ անում  
դյուլում, բարիկենդանին: Զե՞ վոր ուազմա-  
ճակատում եմ:

— Յես նրա համար եմ ծիծաղում, պարոն  
զինվոր, վոր դուք շատ քաղաքավարի յեք:

— Այսինքն ի՞նչպես թե, — քաղաքավարի՞:  
Դու ո՞վ ես:

— Յես, — ասում ե, — մարդ եյի, իսկ հիմա  
անտեր չուն եմ: Դուք մի նայեք, վոր պոչ չու-  
նեմ, այնուամենայնիվ յես չուն եմ . . .

— Դե կորի՞ր, —ասում եմ : — Խոսիր ավելի  
պարզ :

Թափառաշրջիկը ծիծաղում է :

— Դուք, —ասում ե, —սպանեցիք իմ կնոջը,  
իսկ յես հիմա ձեր պահակին քարով խոփեցի :  
— Վո՞նց թե, պահակի՞ն :

Յեվ իսկույն ձեռքս—դեպի բրատևնինով :  
Իսկ նա բոնեց իր կոկորդը, պատառութեց վրայի  
շաղիկը և սկսեց ճգալ . . .

— Կրակի՞ր, մամոնտի աղա . . .

Յես այստեղ հասկացա բանը : Գլխարկիս  
վրա աստղը չի յերեսում և մարդը կարծել է,  
թե յես բանդիտ եմ, մամոնտովցի, սպիտակ  
կաղակ :

— Ո՞վ և սպանել կնոջդ, —հարցիսում եմ, —  
պատամխանի՞ր . . .

— Դուք, —պատասխանում ե : — Դուք, բարի  
պարոններ : Տնակս ել վառեցիք : Նինկայիս,  
պառավիս ել սվինով խոցեցիք : Շնորհակալ եմ  
ձեղնից . . .

Ու հանկարծ ծնկաչոք յեղավ : Սկսեց լալ :  
«Ա՛խ, սատանա, —մտածում եմ, —խելազա-  
րի հանդիսկեցի : Ի՞նչ կարող ես անել նրա  
հետ» :

— Վե՛ր կաց, —ասում եմ, —խե՛ղճ մարդ :  
Գնա՛ : Սխալվում ես, յես սպիտակ չեմ, այլ  
ամենախսկական կարմիր :

Վեր կացավ ու նայում ե : Այնպիսի աչքե-  
րով ե նայում, վոր կյանքումս չեմ մոռանա, —  
մեծ, տիրուր, իսկապես վոր շան աչքերով :

— Գնա, խնդրեմ, —ասացի:

Իսկ նա նայում է:

Յես սարսափեցի: Բրառնինդ ել ունեմ,  
ոից վամփուշտ մեջը, բայց վախենում եմ: Ինչ  
վոր սարսուռ...

Դեղջուկը լոռւմ է: Յես չեղվում եմ արահե  
տից և գզույշ անցնում նրա կողքից: Տարունա  
կում եմ դիալ: Հավաքում եմ ուժերս: Յեվ  
այստեղ, հասկանո՞ւմ եք, ելի կոշտուկներս  
սկսում են ցավել: Խելագարի մոտ կանգնած  
ժամանակ կոչիկներս բոլորովին չորացել-կպել  
են վոտներիս:

Կոշտուկներս ուղղակի հոգիս հանում են:  
Հաղիս եմ զնում:

Հանկարծ հետեխցս վտանաձայն եմ լսում:  
Հետ եմ նայում, — վազում և խելագարը, վա-  
զում և հետեխցս, ինչ-վոր բան և գոսում:

Այ թե վախեցա, ել ույժ չկա: Սկսեցի վա-  
զել, — չեմ կարողանում: Կանդ առա: Բարձրաց-  
րի ատրճանակը և իջեցրի հրահանը:

Ատրճանակս իհարկե չկրակեց: Յերբ լողա-  
ցի եմ, վամփուշտները թրջվել են ու խոնա-  
վացել:

Բայց խելագարը կանգնեց: Կանգնեց և նո-  
րից գոսում ե.

— Պարոն ընկեր, մի՛ զնացեք դեպի այն  
զերեզմանը: Դերեզմանից այն կողմ մահ և  
սպասում ձեզ:

Յես չհասկացա... ի՞նչ գերեզմանից այն  
կողմ: Դատարկ բան է: Գնացի:

Այն ժամանակ յես իհարկե չպիտեյի, վոր  
այնտեղ նրանք ամեն մի բլրակ գերեզման են  
անվանում: Յեվ հենց բլրակ եմ բարձրանում:  
Բարձրանում եմ և հանկարծ տեսնում, — բլրա-  
կից լմ կողմն և դաշիս ձիավոր պարեկը:

Իսկույն դվիսի ընկա, թե այդ ինչ պարեկ ե:  
Արեկ տակ փայլեցին ուստղիքները: Յերեացին  
գառան մորթուց կարած կուրանյան փափախ-  
ները: Կաղակների սրեր: Տեղեր...

— Զնայած իմ սարսափելի կոշտուկներին,  
յես ելի փախա: Վազեցի ու մտա թփերի մեջ:  
Ատրճանակս դեն զցենցի: Զեռքերուխ շոշափեցի  
ծոցս, վորտեղ զտնվում եր ընկեր Բուդյոննուն  
Հայցեյադրված այն դադանի ծրարը:

Բայց զրողը տանի, ո՞ւր և ծրարը: Շոռ  
շավում եմ մերկ փորս, նա իր տեղումն ե, իսկ  
ծրարը չկա: Կորա՛վ ծրարը:

— Սատանա՛: Կորա՛վ ծրարը:

Իսկ բլրակից արդեն սլանում են ձիերը,  
արդեն լսում եմ կաղակների աղաղակը. —

— Հե՛յ, կանգնի՛ր... 

Արդեն նույնիսկ ձիերի փնչոցն եմ լսում:  
Նույնիսկ պինչերից շվոց եմ լսում: Բայց փախ  
չել չեմ կարող: Անհնարին ե: Կոշտուկներս, յե-  
րեվակայեցեք, չեն թողնում վաղել և ձիավոր-  
ները հառան ինձ:

Անմիտ կերպով ընկա նրանց ձեռքը: Թյո՛ւ,  
վորքան անմիտ կերպով:



Ծըջապատեցին ինձ։ Իջան ձիերից։ Հար-  
ձակվեցին։

Ե՛հ, այն ժամանակները բարերախտաբաւը  
յերկու ճեռներս ել վրաս եցին։ Յես նրանց  
ցույց տվի, թե ինչպիս են կովում մեր դյու-  
զում։ Մեկի ատամներին խփեցի, մյուսի ա-  
կանջին, իսկ յերրորդը . . . յերրորդը հասցըց  
դլիս։ Ընկա։ Ուշքս կորցրի։ Բայց չմեռա։

Աչքս բաց արի, — թաց եմ։ Մոռութիս վրա-  
յով ջուր և հոսում։ Խփում և ջուրը, չդիտես  
վորտեղից։ Խփում և քթիս, ականջներիս, աչ-  
քերիս, փորիս։ Թյու։

Դոռացի։ —

— Հերի'ք ե։ Թողե'ք հիմարությունները։

Յեվ իսկույն տեսա, — պառկած եմ լերկ  
հողի վրա, ջրհորի մոտ, շուրջոս սպաներն են  
խմբվում, կազակները . . . Մեկի ճեռքում կա  
յերկաթե մի դույլ, մյուսի ճեռքում ինչ-վոր  
անոթ, անուշադրի սպիրտ ե, թե ինչ . . .

Բոլորը թեքվում են ինձ վրա, հրճվում  
են . . . կոչիկներով դմփում են ինձ։

— Հ'մ, — ասում են, — կենդանացավ։

— Սկսեց շարժվել։

— Սկսեց շնչել բոլշեիկյան մոռութը։

— Վեր կաց, — հրամայում են։

Յես վեր եմ կենում։ Ինձ համար միենույն  
և ինչ անել, պառկել կամ կանգնել, կամ նստել  
աթոռին։ Յես կանգնած եմ։ Թաց եմ։ Ամբողջ  
մարմնիցս կաթում ե։

— Հ'ը, ի՞նչպես, —ասում են: —Ո՞ւր տանել  
սրան:

— Ել ի՞նչ գեսղեն անել նրա հետ, —ասում  
են: —Տա՛ր նրան, սրիկային, ուղղակի շտաբ:

Ինձ տարան շտաբ: Գնում եմ: Զուրը կա-  
թում ե ինձնից: Ուրախ բան չեմ մտածում,  
դիտե՞ք...

«Այո՛, —մտածում եմ, —Պետյա Տրաֆիմով,  
քո կյանքը վերջանում ե: Վերջին քայլերն են  
անում»:

Յեվ, ի միջի այլոց, այդ վերջին քայլե-  
րը սարսափելի յեն: Կոշտուկներս վերջապես  
կատաղեցին: Կոշտուկներս ուղղակի խոցում  
են: Կարծես ունելիքով սեղմում են վոսս: Ո՛ֆ,  
վորքան ծանր ե քայլել:

«Այո՛, —մտածում եմ, —Պետիկ, բավար-  
կան զբոսնեցիր: Հերիք ե: Կոշտուկներդ ել  
յերկար չեն մրմուալու: Մի կես ժամ հետո  
կդնդակահարեն քեզ, բուդյոննովցի Պետյա  
Տրաֆիմով: Եխ, բուդյոննովցի, —մտածում  
եմ, —միշացրիր դործը, ծրարը կորցրիր: Հա-  
պա յերեակայեցեք, բուդյոննովցին կորցրեց  
ծրարը... Մտածում եմ, —մի՞թե յես ծրարը  
կորցրի: Միթե՞ կորցը: Զե՞ վոր այդ անկա-  
րելի յե: Զեյի կարող կորցնել: Զեյի համար-  
ձակվի...»:

Յես աննկատելիորեն շոշափում եմ ինքս  
ինձ: Գնում եմ, հասկանո՞ւմ եք, քարշ եմ դա  
լիս և զդուշությամբ շոշափում եմ ծոցս,  
վնտուում եմ շալվարիս մեջ, սլրպտում կող-

Քերու: Զկա՞ ծրարը: Ե՞հ, ի՞նչ արած, զա  
լսրերախտություն ե: Ծրարով այստեղ ընկ-  
նելն ավելի վատ կլիներ: Իսկ այսպիս մեռ-  
նելն ավելի թեթև ե: Այնուամենայնիվ մեր  
ծրարը չնկավ Մամոնտովի ձեռքը: Այնուամե-  
նայնիվ խիդճդ հանգիստ ե...

— Կանդնի՞ր —ասում են ուղեկցորդները—  
կանդնի՞ր բոլշևիկ: Ահա շտարը:

Մենք բարձրանում ենք շտարը: Մտնում  
ենք կիսախավար նախասենյակը: Ինձ ասում  
են.—

— Սպասիր, մենք հիմա կզեկուցենք հեր-  
թաղահ սպային:

— Լայ... զեկուցեք:

Յերկուոր զնացին, իսկ յերկուոր մնա-  
ցին ինձ հետ: Յես մի փոքր կանդնեցի և ա-  
սացի.—

— Բնկերնե՞ր, ինչքան չլինի, ելի յես ու-  
ղուք յեղբայրներ ենք: Ելի՞ հայրենակիցներ  
ենք: Մի հողի տղերք ենք: Վո՞նց եք կար-  
ծում: Լսեք,—ասում եմ, հայրենակիցներ,  
խնդրում եմ՝ ձեզ, մտե՞ք իմ ծանր դրության  
մեջ: Անդրում եմ ընկերներ,— ասում եմ  
յես,— թույլ ավեք մեռնելուց առաջ կոշիկ-  
ներս հանեմ ու հագնեմ... կոշտուկներս ան-  
տանելի ծակծկում են:

Մեկն ասում են:

— Մենք քեզ ընկեր չենք, զզվեյի: Ռու-  
սաստանը ծախում ես ջնուղներին, իսկ հետո  
կոշտուկներդ են հակծկում: Վոչինչ, են աշ-

իսարհը կոչտուկներով ել կթողնեն։ Կհամբե-  
րիս։

Մյուսն ասում ե. —

— Ինչ կա վոր, մե՞զք կլինի, ինչ և։ Թող  
հանի ու հագնի կոշիկները։ Կարելի յե, հայ-  
րենակից։ Դե՛ս, հանիր կոշիկներդ։

Յես արագ նստեցի նստարանին, անկյու-  
նում և համարյա թե ատամներով եմ քաշում  
կոշիկներն։ Հանեցի մեկը, մյուսը... Ո՞Փ,  
զբողը տանի, ինչքա՞ն լավ, ինչքա՞ն հա-  
ճելի յե շարժել մերկ մատներդ։ Դիտեք, այն-  
պես ես քորում, տրորում և նույնիսկ աչքերդ  
~~Ե~~<sup>Հ</sup> կկոցում հաճույքից։ Նորից կոշիկներդ  
հագնել չես ուզում։

Համեյ եմ նստարանին, մթության մեջ  
թաթերս եմ քորում և բոլորովին ուրիշ մըտ-  
քեր են ծագում գլխումս։ Առույդ մտքեր։  
«Գրողը տանի, — մտածում եմ, — իմ գործերն  
այնքան ել վատ չեն։ Ո՞վ կարող ե, ի միջի  
այլոց, իմ մասին դիպչել։ Ի՞նչ եմ որել յես։  
Կարմիր եմ։ Ճակատիս չի գրված, թե կար-  
միր եմ, աստղ չունեմ, զոկումենտներ նույն-  
պես։ Դեռ հայտնի յել չե, թե ինչու համար  
կարելի յե ինձ զնդակահարել։ Այդ դեռ կտես-  
նենք, պարոնայք ընկերներ...»։

Բայց դեռ յես թաթերս չեյի քորել վոնց  
վոր պետք ե, — բացվում ե դուռը և դոռում  
են. —

— Տերե՛ք զերինս.



— Ե՛յ, զերի, կոշիկներդ հաղիր, շուտ,  
—ասում են ինձ իմ ուղեկցորդները:

Սկսեցի ինչպես հարկավոր և կոշիկներս  
հաղնել: Սկզբում ի հարկե լավ փաթաթեցի  
աջ վոտիս փաթաթանը և հաղա կոշիկս: Հետո  
սկսեցի հագնել ձախ վոտիս կոշիկը:

Վերցնում եմ վոտափաթաթանս: Յեզ  
հանկարծ... այս ի՞նչ բան ե: Շոշափում եմ  
ու տեսնում, վոր ազնտեղ ինչ-վոր ավելորդ  
բան կա: Ինչ-վոր թղթե իր: Մըարն ե,  
Ո՞չու..

Ի հարկե նա ամբողջովին թրջվել է, քըր-  
քըրվել... Ամբողջովին ճիւլվել և փալասի  
նման: Մատանա: Նա շարվարիս միջով ընկել  
և կոշիկս մեջ: Հասկանո՞ւմ եք: Ու մհացել ե  
այնաեղ:

Ի՞նչ արած:

Ի՞նչ անեյի, ասացեք, դե՞ն դցեյի: Նստա-  
րանի տա՞կ: Այ՞ո: Այդպես կդանեցին նրան:  
Կակսեցին հատակը ավյել ու կպտնեցին, հո-  
դիդ սիրեմ:

Մթության մեջ յես տրոքեցի ծրարը, ան-  
նկատելի կերպով դըի գրպանս: Արագ հաղն-  
վեցի և վեր կացա:

Ասացի.—

— Պատրաստ եմ:

— Գնանք:

Մտնում ենք շտարի սենյակը:

Սեղանի մոտ նստած ե սպան: Վոյինչ:  
Բարձական համարեցի մոռթ ունի: Զահել ե,

խալսոյաց: Նայում եւ տռանց վորեւե ղայրույթի:

Իսկ նրա տռաջ, սեղանի վրա դրված եւ մի քար: Հասկանում եք: Ահադին մի կողին: Սպան ժպտում եւ և ճեռքով թեթև շոշափում եւ այդ կոպինը:

Յես ել ակամայից նայում եմ կոպինը:  
— Հ'ը, — տռում եւ սպան, — ճանաչո՞ւմ  
ես:

— Ի՞նչը, — ասում եմ:

— Ահա այդ բանը, քարը:

Վո՛չ, — ասում եմ: Ծանոթ չեմ այդ քա-  
րին:

— Հ'մ, — ասում եւ, — մի՞թե :

— Կյանքումս, — ասում եմ, — քարերի  
հետ գործ չեմ ունեցել: Յես առաղձագործ  
եմ: Յեվ առհամբարակ չեմ հասկանում թե  
ինչ վատ բան եմ արել ձեզ: Ինչո՞ւ համար  
եք այսպես վարդում: Զե՞ վոր յես միայն  
առաղձագործ եմ: Գնում եյի արահետով . . .

Հասկանո՞ւմ եք. և հանկարծ . . .

— Հ'մ, — ասում եւ, — և հանկարծ — ճանա-  
պարհին կանզնած եւ պահակը: Այսօ՞ : Առաղ-  
ձագործը վերցնում եւ քարը, — այս — և  
խփում եւ պահակի դլխին . . . քարով:

Վեր թռավ հանկարծ: Առամները կըր-  
ճրտացրեց: Գոռում եւ . . .

— Մըիկա՞ : Յես քեզ ցույց կտամ հիմա-  
րություններ դուրս տալ: Յես քեզ կա՛յրեմ  
կտոր — կտոր կանեմ . . . :

— «Այս զու, — մտածում եմ, — աստանաւ :  
կտոր-կտո՞ր կանես . . .» :

— Ո՛վոչ, — ասում եմ : Յերեի յես ավելի  
շուա քո վոտները կջարդեմ, մայրիկի ճու-  
տիկ : Յես քեզ պես ճիճույյին մեկ ու կես  
տարի յե, վոր խփում եմ : Հասկացա՞ր : Դու,  
— ասում եմ, գողլի-մողլի յես :

Ստուանա՞ն ինձ գրդեց այդպիսի խոսքեր  
աներ : Այստեղ լի՞նչ դործ ունի մանավանդ  
զոդյի-մոդյին : Բոլորովին դործ չունի :

Իսկ նա սկսեց Փշշալ, շարժվել և գոռում ե  
հենց դեմքիս վրա :

— Հմ, բոլշեկի՞կ ես, ընկե՞ր, ջնուդի  
լրտե՞ս : Լա՞վ, լա՞վ, լավ : Հրաշալի յե :

— Ցղե՞րք, — կանչում ե նա իր կազակնե-  
րին, — հա՞պա, վերցրեք սրան : Խուզարկել  
սրիկային մինչև թաթերը :

Ե՛խ, այստեղ դոդն ընկավ ջանս : Հետ  
փախա : Կկոցեցի աչքերս : Բուռնցքներս այն-  
պես սեղմեցի, վոր յեղունդներս խրվեցին ա-  
փիս մեջ :

Բայց այստեղ, հասկանո՞ւմ եք, իմ բախ-  
տից բացվում ե դուռը, ներս ե վազում ջահել  
մի սպա և գոռում ե . . .

— Պարոններ, պարոններ, ներողություն  
. . . գեներալը գալիս ե :

Բոլորը վեր թռան : Գունատվեցին : Այդ  
ճիճուն նույնպես վեր թռավ և մեռելի պես  
գունատվեց :

— ԱՌՅ — ասում եւ, — սա ի՞նչ բան եւ Հա՞ն  
դասարարու, — զոռում ենա: — Իսկույն պահակ  
կանգնեցնել: Բոլորդ իսկույն դեպի փողոց, ա-  
տամանին դիմավորելու: Շուտ: Ու բոլորը վա-  
ղիցին դեպի դուռը:

Իսկ յես մնացի մենակ, անգլիական կի-  
սակոշիկներ հաղած յերիտասարդ կազակի  
հետ: Սա հենց այն կազակն եր, վորն ինձ  
խղճաց և թույլ տվեց կոշիկներս հանել ու  
հագնել: Հիշու՞մ եք: Կանգնել և հենց դուսն  
մոտ, խաղում և հրացանի հետ և նայում ե  
ղեմքիս: Աչքերն ել, հասկանո՞ւմ եք, պարզ  
չեն: Ժպտում ե կարծես: Կամ գուցե դրանք  
յերկչու աչքեր են: Գուցե նա վախենո՞ւմ ե:  
Վախենում ե վոր յես կփախչե՞մ:

Զգիտեմ: Յենթաղըություններ անելու  
ժամանակ չունեյի: Ճեռքս տարա գրապանս,  
չոշափեցի ծրարն և մտածում եմ. . .

«Ահա քեզ վերջին հանելուկը. ի՞նչ անեմ  
ծրարը: Անհրաժեշտ և վոչնչացնել: Բայց ինչ-  
ողե՞ս: Ինչ հնարով վոչնչացնել: Դուքս  
շպրտել չի կարելի: Պարզ ե: Պատռել անկա-  
րելի յե: Ինչ եք ասում: պատռես, հետո այս  
դեմքերը կկպցնեն կտորները: Վո՞չ, պետք ե  
մի ուրիշ բան մտածե՞յ:

Հասկանու՞մ եք: Կանգնել եմ, ծրարն եմ  
չոշափում և վերակացույիս նայում: Իսկ վե-  
րակացուն ժպտում ե, այո: Նայում եմ նրան:  
— Ժպտում ե: Ինչվոր կասկածելի մոռթ ե:  
Արդյոք ցավակցո՞ւմ ե, թե՞ ծիծաղում: Արի

ու հասկացի՞ր։ Գլխավորն այն է, վոր շարունակ խաղում է հրացանի հետ։

«Ի՞նչ կլինի, — մտածում եմ յես, — յեթե ծրաբը տամ նրան, ալլահի հույսով։ Միթեմ առ, ընկեր, թաղցրու..»

«Վո՞չ, — մտածում եմ, — վոչ մի դեպքում։ Մոռթը կտակածելի յե։ Շան մոռթ ե»։

Բայց սատանան տանի ի՞նչ անեմ ծրաբը։  
Յեվ այստեղ ակա թե ինչ մտածեցի։ —

«Ի՞ւ, — մտածեցի, — ա՛յ քեզ բան։ Ինչի՞ մտախն և խոսքը։ Այս, կուտեմ... Հասկունում եք։ Կուտեմ, պրծանք դնաց»։

Իսկույն հանեցի ծրաբը։ Ծրաբ չի իհարկե, ի՞նչ ծրաբ, — ուզգակի թղթի ծանր մի դունու։ Կարծես փոքրիկ բուլիկի լինի, թրղթե կարկանդակ։

«Ե՞խ — մտածում եմ, — մայրիկ։ Վո՞նց ուսում, վո՞րաեղից սկսեմ, վո՞ր կողքից»։

Մտքի մեջ ընկա՛, գիտե՞ք։ Ինչքան չինի անսովոր բան ե։ Ինչքան ըինի թուղթը խոնրիթ չե՞»։

Յես նայեցի իմ ուզեկցորդին։

Ժպտում ե, հասկանո՞ւմ եք, ժողովում և սոլիտար բանդիտը...»

«Հմ, այդպե՞ս — մտածում եմ — ուրեմն ժողովո՞ւմ ես»։

Յեվ յես ատամներով կտրեցի ծրաբի մի մասը։ Սկսեցի կտմացուկ ծամել, անուշ անել։

Յեկ դիտե՞ք, լա՞վ անուշ եմ անում:  
Նույնիսկ ճպճպացնում եմ:

Վո՞նց ասեմ ձեզ: Իհարկե անսովոր բանն  
այնքան ել համեղ չե: Ինչ-վոր վաս համ  
ունի: Զգվանքով եմ կուլ տալու: Գլխավորն  
այն է, վոր առանց աղի, առանց բանի, այն-  
պես, չոր-չոր ծամում եմ:

Իսկ իմ ուղեկցորդը, հասկանո՞ւմ եք,  
դադարեց ժպտալ, դադարեց հրացանը խա-  
ղացնել և ուշադիր դիտում են ինձ: Յեկ հան-  
կարծ կամացո՛ւկ, զգո՞ւյշ ասում ե.-

— Ե՛յ, անուշ ըլի...

Զարմացյա, դիտե՞ք: Ա՛յ քեզ բան: Նույ-  
նիսկ դադարեցի ծամել:

Խուսամուտի հետեւվում, փողոցում սկսում  
են աղմկել ու հաջել.—

— Ուռա՛, ուռուա՛ա, ուռուա՛աս:

Կառքը կարծես մոտեցավ: Զանգակները  
զնպղնդացին: Ու յիս դեռ ինչպես կարդն և  
չեյի զարմացել, յերբ հաշտում ձայներ լսվե-  
ցին, հրացանների կոթերը դոփեցին և պա-  
հակը խրտվիլակի պես քարացավ: դռան  
մոտ: Յես վախեցա: Զեռքումս ամուր սեղմե-  
ցի իմ սպիտակ կարկանդակը և ամբողջովին  
առա բերանս: Խոթեցի բերանս և հազիվ  
ծածկեցի շրթունքներովս: Կանգնել եմ և  
չնչել չեմ կորողանում: Թուքս ել չեմ կարո-  
ղանում կուլ տալ:

Դուռը լայն բացվեց և ներս լցվեց վոհ-  
մակը:

Առջեկից զնում և դեներալը: Բարձրահասակ,  
ծուռ-աչքանի մի արջ և կուբանի վասփախով:  
Նրա յետեկից սողում են սպաները, դրագիր-  
ները, պուրհանդակները: Բոլորը դես-դեն են  
ընկնում, վազում են, դեներալին աթոռ են  
բերում: Մանավանդ դես-դեն և ընկում շտորի  
հերթապահ սպան: Այս հերթապահ սողունը  
ուղղակի քծնում և գեներալի առաջ:

— Պարդոն, — ասում ե, — Ձերդ Գերազան-  
ցություն: Մենք, — ասում ե, — ձեզ բոլորո-  
վին չելինք սպասում: Մենք, այսպես ասած,  
կարծում ելինք, վոր դուք Յելենովկայի  
մոտ կովի յեք բռնվել:

— Այս, — ասում ե դեներալը: — Բոլորո-  
վին ճիշտ ե: Յելենովկայի մոտ արդեն կռիվ  
յեղավ: Կարմիրները նահանջեցին: Աստծո  
ոգնությամբ մեր զորամասերը վերցրին Սամ  
յանոսերբակը և Ռիխովայի վրայով շարժվում  
են դեպի Հուգանսկ:

Նա մոտեցավ պատին, վորտեղ կախած եր  
ռազմական քարտեղը և մատով ցույց տը-  
վեց, թե ո՞ւր և ինչի՞ համար են գնում նը-  
րանց զորամասերը: Այստեղ նա ինձ նկա-  
տեց:

Իսկ այս ո՞վ ե, — հարցրեց:

— Այս դերի յե, Ձերդ Գերազանցություն  
— ասացին նրան: Կես ժամ՝ առաջ քարով սպա-  
նել և մեր սրահաւին: Բռնված ե տեղիս շրջա-  
կայքում, մեր ձիավոր պարեկի միջոցով:



— Հ'ըմ, — ասում ե դեներալը: Մոտենում  
ե ինձ: Ատամները յերկու անգամ իբժաց-  
նում:

Հ'ը, — ասում ե նա, — հրեշտակս, ըն-  
կո՞ր, բոնվեցի՞ր, արդեն հարցաքննեցի՞ն:  
— Վո՞չ, — պատասխանեցին, — դեռ չի  
հարցաքննված:

— Խուզարկեցի՞ք:

Տեղն ու տեղս սառեցի, ընկերներ: Ատամ-  
ներս ավելի պինդ սեղմեցի իրար ե մտածում  
հօմ:

«Ե՛ս, ճիշտ ե, ելի: Բոնվեցիր, հրեշտա-  
կը»:

Ի միջի այլոց բոլորը լուսմ են: Բոլորը  
նայում են իթոր: Աւսերն են թափ տույխ:   
Միթում հայտնի չե, չդիտե՞նք:

Այսուղ, յերեակայեցեք, իմ հայրենա-  
կիցը, անդլիական կոշիկներով այն նույն կա-  
զակը, ասում ե, —

— Այո, Ձերդ Գերազանցություն, խո-  
զարկեցինք:

— Յե՞րբ:

— Այն ժամանակ, յերբ նո դիտակցու-  
թյունը կորցրած, պառկած եր ջրհորի մոտ:

— Ե՛ վո՞նց, — ասում ե, — վոչինչ չզր-  
տո՞ք:

— Վո՞չ, — պատասխանում ե, — զտանք:

Այսինքն ի՞նչ:

— Այսինքն վոչինչ, — ասում ե, բայց  
դատանք մի դայթան:

— Ի՞նչ զայթան:

— Ահա, — ասում ե և գրականից հանում  
ինչ-վոր զայթան: Աղնիվ խոսք կյանքումս  
այդ չեցի տեսել: Սավորական քաթանից մի  
ժամանակ տրեխներն են կապում: Միայն թե իմը չե, արես վկա...

— Այս, — ասում ե գեներալը, — կասկածելի  
զայթան ե: Սա քո՞նն ե, — հարցնում ե ինձ:

Իսկ յես, հասկանում եք, գլուխս պըտ-  
տեցի, շարժեցի, բայց ասել թե վոչ, իմը  
չե, — չեմ կարող: Բերանս զբաղված ե:

Այսուղ, հասկանում եք, միջամտում  
ե կազմակը, —

— Սա, Զերդ Գերազանցություն, — ասում  
ե նա, — վտանգավոր դայթան չե: Սա ատաղ-  
ձագործական զայթան ե: Այսուղի ատաղ-  
ձագործները նրանով զանազան բաներ են չա-  
փում արշինի փոխարեն:

— Ատաղձագործները, — հարցնում ե  
գեներալը, — ուրեմն դու ատաղձաղործ ես,  
ինչ ե:

Յես, հասկանում եք, ռվասով արի, բայց  
չեմ կարողանում ասել, թե յես իհարկե ա-  
տաղձագործ եմ: Ելի՛ բերանս զբաղված ե:

— Սա ի՞նչ բան ե, — հարցնում ե գեներա-  
լը, — նա համբ ե թե ինչ:

— Ո՛վո՞չ, — պատասխանում ե սպան: —  
Պետք ե հայտնեմ, Զերդ Գերազանցություն,

վոր հինդ բոպե առաջ այս համբն այստեղ  
այնպիսի մի միտինդ եթ առում, վոր նրան կա  
խեյն ել քիչ եւ Մանավանդ վոր, — առում ե  
սալան, — նա ինձ անձնական վերավորանք  
հասցըց... .

— Այդպես, — առում ե զեներայը, — Հրա  
բաշալի՛ յե: Հապա, — առում ե, — ինձ աթոռ  
տվէք, յես պիտք ե նրան հարցաքննեմ:

Նստեց աթոռին, հենվեց սրին և դիմեց  
ինձ.—

— Տես ինչ եմ առում, յեթե դու ինձ հենց  
այժմ չպատասխանես, թե ով ես և վորտե-  
ղից, կդնդակահարվես: Առանց դատարանի  
ե քննության: Հասկացա՞ր:

Իհարկե հասկացա: Այստեղ առանձին  
ի՞նչ անհասկանալի բան կա: Կդնդակահար-  
վեմ: Առանց դատարանի ե քննության:

Եես լրում եմ: Գեներալը նույնպես լրեց,  
և ապա առում ե.—

— Եեթե դու բոլցեիկյան լրտես ես,  
հայտնիք ձեր զորամասերի անունը, հետեա-  
զորի կամ հեծելաղորի քանակը և շտարի տե-  
ղը: Իսկ յեթե այստեղի ատաղճապործ ես,  
ասա, փո՞ք գյուղից ես...

— Տեսա՞ք: Ասա նրան, վոր դյուզից ես:  
Ե՞խ... .

«Իմ գյուղը, — մտածում եմ յես, — ձեզ  
հայտնի յե: — Գերեզմանոցային նահանդ, Գե-  
րեզմանի դավառ, Դադաղ դյուզ»:

Եեվ այդ յես կասեյի, բայց բերանս փակ-

ված եւ Մտածում եմ մի բանի մասին. —

«Վո՞նց անեմ, վոր մեռած ժամանակ բերանո բաց չանեմ։ Յեթե բաց անեմ, ծրաբը կընկնի։ Ամա՛ «նոմեր» կլինի հա՞ա. . . .»

— Ձե՛, — ասում ե Գեներալը, ինչպես յերեսում ե, ոս այն կոմիսարիկներից ե, վորոնք համբ են ձեանում։ Այդպիսիներն ավելի շուտ իրենց լեզուն կծելով կկտրեն, քան թե կխոսեն։ Սակայն. . . . ահա, — ասում ե, — իմ կարգադրությունը։ Փորձեցեք նոան շամփուրով, հասկանում եք։ Յերբ ուղենա խոսել, բերեք նրան կմ բնակարանը։ Յես զնում եմ թեյ խմելու. . . .

— Բայց տեսնք, — ասում ե գեներալը, — ծեծելով չմեռցնեք։ Նրան գնդակահարել մենք միշտ կարող ենք, բայց նախ հարցաքննել և հարկավոր։ Հասկացա՞ք։

— Այո՛, Զերդ Գերազանդություն, — պատասխանեցին։ Այնքան չենք ծեծի, վոր մեռնի, այլ ինչպես կարգն ե։

Գեներալը գնաց թեյ խմելու։ Ինձ տարան հարեան սենյակն և հրամայեցին շալվարս հանել։

— Հանիր հատուկ հագուստդ, ատաղճագործ, — ասում են ինձ։

Սկսեցի հանել հատուկ հագուստս։ Իմ թանկողին բուղյոննովյան դալիֆես։

Իհարկե չեմ շտապում։ Ծիծաղելի յեշտապել, յերբ պատրաստվում են թակելքեղ։

Կամացուկ, դանդաղ քանդում եմ կոճակ-  
ներս և մտածում.—

«Դրությունս լավ չե: Յեթե ինձ ծեծեն,  
կարող եմ ճշալ: Իսկ յեթե ճշամ, ծրաբն ան-  
պայման բերանիցո վայր կընկնի: Պարզ ե, վոր  
ճշալ չի կարելի: Պետք ե սուս անել»:

Մինչ այս մինչ այն, բանդիաները սենյա-  
կի մեջտեղ զրին մի նստարան, դրատով ծած-  
կեցին և ասում են.—

— Պառկի՞ր:

Հրացաններից հանում են շամփուրները և  
սբանց քսում են ինչ-մոր հեղուկ: Գուցե քա-  
յախ ե, կոմ աղջուր: Զգիտեմ:

Ես պառկեցի նստարանին:

Փորս ներքելից, մեջքս վերևից: Մեջքս  
մերկ ե: Հիշում եմ, վոր մեջքիս վրա խկույն  
մի ճանձ նստեց: Հիշում եմ նաև, վոր նրան  
շըշեցի: Նա քորեց մեջքս, վազվզեց ու թռալ:

Հենց այդ ժամանակ շամփուրով խփեցին  
մեջքիս:

Ես դրան վոչինչ չպատասխանեցի, միայն  
տուամներս իրար ավելի պինդ սեղմեցի և մտա-  
ծում եմ.—

«Միայն թե չճշամ. մնացածը փառք ան-  
տուծո, վոչինչ»:

Ծրաբը բոլորովին փափկեց և յես նրան  
կամաց կուլ եմ տալիս: Խփում են ինձ, և յես  
փոխանակ ճշալու կամ ախ ու վախ անելու,  
ծրաբն եմ կուլ տալիս: Լոռմ եմ: Բայց իհարկե  
ցավ եմ զգում: Իհարկե խփում են ծանր, ա-

ուանց խղճալու... Խփում են մեջքիս և այն տեղիս, — մեջքից մի քիչ ցած, կողերիս, վոտներիս, ամեն տեղիս:

Ցավ եմ զգում: Բայց լուսմ եմ:

Սպաները զարմանում են:

— Այ քեզ սատանա, ի՞նչ պտուղ և հա՛: Դե՛հ, դե՛հ, խփեցեք, տղերք... խփեցեք դրան, մինչեւ կիսամահ լինի: Լեզուն կբանա՛, բլրու կդառնա լիրը...

Ու դարձյալ ծեծում են ինձ: Դարձյալ սկսվում են շամփուրները:

Շը՛զք, շը՛զք, շը՛զք...

Յես գլուխս կախել եմ նստարանից, տտամներս իրար սեղմել ե լուսմ եմ: Զենո կարասն եմ զցել:

— Զե՛, — ասում ե սպան, — այսպես չի լինի: Ի՞նչ ե արել նա: Գուցե նա, սատանան, խսկապել լեզուն կտրել ե կծելով... Ե՛յ, դադարեցե՛ք...

Կանգ առան: Մըթմըթում են: Հոգնեցին ինեղները:

— Ե՛յ, ասում ե սպան, — ատաղձագո՛րծ, ինձ պիտի պատասխանե՞ս թե վոչ: Ասա՛:

Յես հիմարացած, պատասխանում եմ.—

— Վո՞չ:

Ատամներս ել եմ իրարից բաժանում, ըրթունքներս ել: Յերանիցս ինչ-վոր բան ե ընկնում: Ընկնում ե հատակի վրա:

— Ե՛յ, — ասում ե սպան, — այդ ի՞նչ ընկապնը բերանից: Կաքալյով, նայի՛ք:

Կարալյովը մոտենում է ու նայում։ Նայում է ու ասում. —

— Լեզու յե, Զերդ Ազնվություն... .

— Ինչպես, —հարցնում է սպան։ Ինչ առացի՞ք։ Լեզո՞ւ։

— Այո Զերդ Ազնվություն։ Լեզուն ընկած է հատակի վրա։

Լարում եմ ուշքս։

«Թյո՛ւ, —մտածում եմ, —մի՞թե իսկապես ծրաբի հետ լեզուս եմ ծամել»։

Ծուռ ու մուռ եմ անում լեզուս և չեմ կարողանում հասկանալ. ի՞նչ ե սա, լեզո՞ւ յե, թե լեզու չե։ Բերանումս այնպես դառն ե, ատամ նահարություն, թանաք, կնքամոմ, արյուն... .

Նայեցի հատակին և ի՞նչ եմ տեսնում. —

Այո, իսկապես, հատակի վրա լեզու յե ընկած։ Սովորական, կարմիր լեզու։ Ճանճն ել նստել ե վրան։ Հասկանո՞ւմ եք։

Հասկանո՞ւմ եք վորքան ծանր եր ինձ համար։

Զե՞ վոր իմ լեզուն եր, ընկերներ, ի՞մը։ Դվասավորը՝ ճանճը նստել ե վրան։ Յերեակայո՞ւմ եք։ Ճանճը նստել ե իմ լեզվի վրա և յես նըանից գարշելով չեմ կարող քշել։

Ե՛ի, այդ բոլորն այնքան ծանր եր ինձ համար, վոր սկսեցի լալ։ Ազնիվ խոսք ուղղակի լալ, ինչպես յերեխա... Պառկել եմ դրատի վրա և լալիս եմ։

Բանդիտները կանգնած են շուրջս, զարմանում են ու չգիտեն ինչ անեն։

Այդ ժամանակ սպան ասում ե . . .

— Կարալյով, վերցրու տա՛ր :

— Հսում եմ , — ասում ե կարալյովը : — Ո՞ւմ  
տանեմ :

— Լեզուն վերցրու տար, հիմա՛ր, չե՞ս  
հասկանում :

«Զե՞ , — մտածում եմ , — չափն անցնում եք :  
Չեմ թույլ տա , վոր ձեռք տաք իմ լեզվին »:

Արագությամբ կուլ տվի արցունքներս և  
այն բոլորը , ինչ վոր կար բերանումս . ձեռքս  
մեկնեցի , վերցրի լեզուն և առա բերանս :

Ու քիչ մնաց ատամներս կոտրեցի :

Արևս վկա , յերբեք այդպիսի լեզու չեմ տե-  
սել : Կոշտ : Պինդ : Ինչ-վոր քար ե և վոչ թե  
լեզու . . .

Այստեղ յես հասկացա բանը :

«Թյո՛ւ , ախր սա լեզու չե , — մտածեցի : Սա  
կնքամոմ ե , հասկանո՞ւմ եք : Սա ընկեր Զավա-  
րուխինի կնիքի կնքամոմն ե , մեր կոմիսարի :  
Հա՛ , հա՛ »:

Թյո՛ւ , ինչու՞ս ծիծաղս յեկավ :

Ատամներով կտրեցի այդ կնքամոմն լեզուն  
և արագությամբ , անեկատելի կուլ տվի :

Պառկած եմ : Չեմ կարողանում պահել ծի-  
ծաղս :

Մեջքս այրվում ե , վոսկորներս ջարդվում  
են , իսկ յես քիչ ե մնում ծիծաղեմ :

Ինչի՞ վրա , ի՞նչ եք կարծում :

Յես նբա համար եմ ծիծաղում , վոր բան-  
դիտները շատ վախեցան իմ լեզվից : Այ թե

վախեցան, հա՞ : Այ թե նրանց պատժելու յե դե-  
ներալը : Ախր զեներալն ի՞նչ ասաց նրանց, —  
վոր նրանք ինձ կենդանի և առողջ տանեն նրա  
բնակարանը : Իսկ նրա՞նք...

Սպան գլուխը բռնում ե ձեռներով :

— Ո՞յ, —ասում ե, —անկարելի բան ե...  
ի՞նչ արեց նա, ախր կերավ լեզուն : Հասկանո՞ւմ  
եք : Վոչնչացրեց լեզուն : Ասոված իմ, —ասում  
ե, —ինչպիսի սրիկան ե...

Յեվ տմպտմպալով մոտենում ե ինձ :

— Յեղբայրս, —ասում ե, —ի՞նչ ե պատա-  
հել քեզ, հը՞ : Ինչո՞ւ յես լալիս :

— Հը՞ , —հարցնում ե, —գուցե քեզ համար  
ծա՞նը ե այդպես պառկելը : Ասա : Կարելի յե  
բարձ բերել : Բարձ ուզո՞ւմ ես, պատասխանիր :

Իսկ յես նրան պատասխանում եմ .—

— Ի' ի՞նձ մը—մը...

— Ի՞նչ, —հարցնում ե :

Յես ասում եմ

— Մը—մը...

Ու գլուխն ե շարժում : Հասկանո՞ւմ եք :  
Իբր թե յես իսկական համը եմ :

— Այո՞ , — ասում ե սպան, —հենց այդպես  
ե : Նա կուլ տվեց լեզուն :

— Հապա տղերք, —ասում ե, —տանենք  
սրան տկարանոց, բժշկի մոտ : Գուցե կարելի  
լինի նրան մի ճար անել : Գուցե նա բոլորովին  
չի կտրել լեզուն : Գուցե կարելի յե լեզուն կա-  
րել :

— Հագնվի՛ր, —ասում ե ինձ:

Սկսեցին ինձ ոզնել հագնվելիս: Սկսեցին  
վրաս քաշել վերնաշապիկս, կոճկել, կարծես  
թե յես յերեխա յեմ և ինքս չեմ կարող: Բայց  
յես դեն հրեցի նրանց և ինքս հագնվեցի: Ինքս  
կոճկեցի և վեր կացա: Վոտքի կանգնեցի:

Առաջին գործս այն եր ի հարկե, վոր շոշա-  
փեցի մեջքս: Հարկավոր եր իմանալ, թե ինչ ե  
յեղել:

Վո՞նց ասեմ ձեղ: Քոր ե գալիս: Մեջքս  
դարձել ե մի տեսակ լարծուն, զզվելի: Վոտ-  
ներս նույնակես: Վոտներս հազիվ են հնազանդ-  
վում: Թյո՛ւ, ինչքան են վատացել վոտներս:

— Դե՛հ, —ասում են, —գնանք:

Գնացինք: Դուրս ենք դալիս հրապարակ:  
Քայլում ենք: Գնում ենք՝ յես, սպան և, յերե-  
մակայեցե՛ք, անդլիական կոշիկներ հագած-  
կազակը: Նրա ազգանունը Զիկով ե:

— Լսիր, Զիկով, —ասում ե սպան: — Տա՛ր  
շուտով սրան տկարանոց: Յես ել կհասնեմ յե-  
տեվիցդ: Յես հասկանո՞ւմ ես, պետք ե մտնեմ,  
նորին Գերազանցության մոտ:

Նա վերցրեց իր հեծելազորային սուրն և  
վազեց:

Իսկ մենք գնում ենք հրապարակի միջով:  
Յես — առջեկից, իսկ Զիկովը՝ մի փոքր յետե-  
վից: Հրացանը կախել ե ուսից: Լում ե:

Յես ասում եմ. —

— Լսիր, հայրենակից . . .

Իսկ նա պատասխանում ե, —

— Լոել:

Յես ասում եմ .—

— Դե՛ լավ, աղբերացու . . .

Իսկ նա .—

— Զիսոսե՛լ: Հանդա՛րտ:

Ա՛յ թե ինչպիսի հիմարն ե: Ա՛յ քեզ վորուկան շան մռութ:

Ե՛հ, յես այլես չխոսեցի նրա հետ և լուս դնում եյի:

Գնում եմ, հասկանո՞ւմ եք, քարշ եմ դալիս և զանազան բաներ եմ մտածում: Յեվ շարունակ այն մասին եմ մտածում, վոր վերջնականապես իմ բանը բուրդ ե, վոր ամեն տեղ, ուր ել գնամ, վերջս հասել ե:

Հապա ինքներդ մտածեցեք, ի՞նչ անեմ: Փախչե՞մ: Բայց հետեւիցս քայլում են հրացանով: Թեկուղ փախչես, միենույն ե, փրկություն չկա:

Զե, բանս բուրդ ե: Դրությունս շատ է տիսուր: Միայն մի ուրախ բան կա, — ծրարն անուշ եմ արել: Ա՛յ, դա լավ ե: Այդ վոչի՞նչ: Գոնե խիղճս մաքուր ե մեռնելուց առաջ:

Մենք հասանք տկարանոց, մեր, զինվորական լեզվով ասած, իսկ քաղաքացիական լեզվով կոչվում ե բուժարան, կամ հիվանդանոց՝ չդիտեմ:

Մի փոքրիկ գյուղական տուն: Լուսամուտը բաց ե: Տունն ունի արտաքին սանդուխչ: Սանդուխչի մոտ, լուսամուտի տակի հողաթրմ

բի վրա նստած են հիվանդները։ Հերթի յեն  
սպասում։

Մեկի ձեռքին սպիտակ փաթթոց կա։  
Մյուսի վոտը վիբակապով կապված։ Յերրոր-  
դը ձեռքը շարունակ լնում ե այտին, — ատամ-  
ներն են ցավում։ Չորրորդը շոշափում ե վզի  
վերքը։ Հինգերորդն ել սատանան գիտե ինչ հի-  
վանդություն ունի։ Ռւղղակի նստել ու ծխում  
ե։ Բոլորն ել, ի հարկե, ինչ-վոր բանի մասին  
են խոսում, ինչ-վոր բան են պատմում, ծիծա-  
զում են, հայհոյում . . .

Իմ ուղեկցորդն ասում ե. —

— Բարե, աղեք։

— Բարե։ Ո՞ւր առանց հերթի։ Նստի՛ր,  
տասնչորսերորդը կլինես։

Նրան պատասխանում են. —

— Մենք առանց հերթի պիտի գնանք։ Մեր  
գործը, — ասում ե, — շատ լուրջ ե։

— Ծտարի՞ց եք։

— Հա՛, ելի, — ասում ե։ — Տեսնո՞ւմ եք, կո-  
միսարը հիվանդացել ե։

— Ո՞հ, — ասում են, — նրա ի՞նչն ե ցավում։

— Նրա ատամն ե ցավում։ Մեռնելուց ա-  
ռաջ ուզում ե վոսկի ատամ դնել։

— Ո՞հ — ասում են հիվանդները։

Ծիծազում են սատանաները։ Ձեռ են առ-  
նում։ Նա յել, այն վորսկան շան մռութը, —  
նույնպես հոհուում ե և խողավարի հանաք առ-  
նում։

— Հապա՛, կոմիսար, — ասում ե նա, —  
նստիր, հանգստացիր, քանի դեռ նորին Ազնվու  
թյունը նորին Գերազանցության մոտ ե : Դե՛, —  
ասում ե, — մի ամաչիր :

Յես չեմ ամաչում : Ուղում եյի նստել,  
բայց չնստեցի, այլ մի փոքր հենվեցի սյունին :

Կանգնել եմ, մեջքս քորում եմ սյանը քսելով և  
այդ զզվելիների վրա ուշադրություն չեմ  
դարձնում :

«Թող հրճվեն, — մտածում եմ : Մէ՞ղք ե,  
ինչ ե : Հիվանդներ են, ելի : Զանձրանում են» :

Ու չեմ ել լսում, թե ինչ են վրվում իմ  
մասին : Յես, գիտե՞ք, զմայլվում եմ բնու-  
թյամբ :

Ա'խ, ինչպիսի բնությո՛ւն : Նմանը չեյի տե-  
սել, արես վկա : Մինչեւ անգամ մեր գյուղում  
չկան այսպիսի այգիներ և խիտ բարդիներ :  
Իսկ ողն այնպես հրաշալի՛ յե : Խնձորի հոտ և  
գալիս : Յերկինքն ել այնպե՛ս կապույտ ե,  
նույնիսկ Ազովյան ծովից ել կապույտ : Ուղղա-  
կի պատրաստ եմ ամբողջ կյանքումս այսպես  
զմայլվե՛լ :

Բայց ել ի՞նչ կյանք մնաց : Քիչ : Հենց նրա  
համար եմ զմայլվում, վոր հետո արդեն ուշ  
կլինի : Գոնե ամբողջ սրտովս զմայլվում եմ :  
Նույնիսկ յերեսս դեպի յերկինք եմ պարզել :

Հանկարծ սուրը կողքից քարշ արած բանում  
ե նորին Ազնվություն պարոն սպան : Այնպես  
կարմրել ե, ճիւլտվել, կարծես թակել են նրան :  
Ու հարձակվում ե ինձ վրա :

Հը՝ — ասում ե, — լեզո՞ւդ ես կծում : Դու —  
լեզու յես կծում, իսկ ես պատասխա՞ն պիտի  
տամ քեզ համար : Այո՞ , զզվելի քոստ...

Թե՛ը տարավ-բերեց ու շրա'իսկ դեմքիս :  
Հասկանո՞ւմ եք :

Յես վոչինչ չպատանիսանեցի, միայն առ  
տամներս իրար սեղմեցի և մի լավ հասցրի  
դանդին :

Ո՛հ, վո՞նց ե վոռնում, մղկտում ու հառա-  
չում :

— Գնդակահարե՛լ...

Իսկ յես նորից շրա'մփ, ու ելի ամբողջ  
ույժովս — շրա'մփ :

Նա նստեց հենց սանդուխքի մոտ :

Ի հարկե հիվանդներն իսկույն և յեթ ինձ  
բռնեցին : Թեևերս վոլորեցին, նադանը դեմ արին  
քներակիս և չեն բաց թողնում : Իսկ յես չեմ ել  
դուրս պրծնում : Ինչո՞ւ դուրս պրծնեմ . . . կանգ  
նած եմ լուռ :

Սական վեր ե կենում, ուղղում ե իր սպայա-  
կան դիմարկը և ասում . . .

— Դեռ մի՛ զնդակահարեք . . .

Եետո որորվում ե, աչքերը խփում և ա-  
սում . . .

— Ո՛ֆ . . . վատ եմ զդում ինձ :

Նրան արագությամբ նստեցնում են սան-  
դուխքի վրա և սկսում են հովհարել մոռւթը, —  
ինչով ասես, — մեկը փալասով, մյուսը ծառի  
ճյուղով, յերրորդն ել ուղղակի իր փաթաթ-  
ված ձեռքով :

— Հը', վո՞նց ե, Զերդ Ազնվություն, — լաւ  
վացա՞ք:

— Վո՞չ, — ասում ե, — վո՞չ բոլորովին:  
Նորից հովհարեցին:

— Հը', վո՞նց ե:

— Լավացա, — ասում ե, — շնորհակալու-  
թյուն... ապրեք, տղերք:

Նրանք, հիմարները պատասխանում են. —

— Ուրախ ենք ուրախ, Զերդ Բարձր ազնր-  
վություն:

Հետո ասում են. —

— Հը', ի՞նչպես, կարելի՞ յե գնդակահա-  
րել.

— Դեռ վոչ, — ասում ե սպան: Վեր ե կե-  
նում: — Վո՞չ, — ասում ե, — ցավոք սրտի պետք ե  
հետաձգել գնդակահարումը: Մրան հարկավոր  
ենախ ցույց տալ բժշկին: Բայց գնդակահարու-  
թյունից նա չի տղատվի: Յես, — ասում ե, — այդ  
անպիտանին կես ժամ հետո շիլա կդարձնեմ:  
Մեփական ձեռքերովս: Միայն թե նախ սրան  
բժշկել ե հարկավոր... Խսիր, Զիկով, խնդրեմ  
տանես սրան բժշկի մոտ, իսկ յես ձեր հետեւից  
կդամ:

Հասկանո՞ւմ եք: Վախենում ե: Վախենում  
ե իմ կողքից գնալ: Զիկովը հետո ե, ելի վա-  
խենում ե...

— Հապա՛, — ասում ե, — թող մի ուրիշն ել  
գնա... Ֆիլատով, զու, նազանդ մոտդ ե,  
գնա՛նք մեզ հետ...

Զիկովը բոթում ե ինձ հրացանի կոթով և  
դոռում .—

— Քայլի՛ր, սատանա՛:

Յես քայլեցի: Բարձրանում եմ սանդուխ-  
քով և մտնում հանդերձարանը:

Այսուեղ, գիտե՞ք, ողն ուղղակի անտանե-  
լի յե: Կարբոլյան թթվուտի հոտ ե զալիս: Դես  
ու զեն թափված են բանկաներ, սրվակներ,  
թիթեղյա ամաններ: Փոշի յե, հասկանո՞ւմ եք,  
կեղտ: Պատերը սե են: Պատի մոտ դրված ե  
փայտյա մի նստարան, կախարանից կախված  
են զինվորական գրատներ, պլխարկ և ուսա-  
դիրներով մի բաճկոն:

Յես այդ բոլորը գիտեցի, վորովհետև մենք  
հանդերձարանում կանգնած եյինք մի ամբողջ  
բոպե, մինչեւ նորին Ազնվությունը բարձրա-  
նում եր սանդուխքով: Նա, հասկանո՞ւմ եք,  
նորից վատ զգաց իրեն: Նորից նրան հովհարե-  
ցին ծառի ճյուղերով:

Հետո նա զալիս ե ու ասում .—

— Ե՛յ, դուք, ի՞նչ եք կանգնել ճանապար-  
հին: Բժշկի մո՛տ: Շո՛ւտ:

Զիկովը նորից ինձ բոթում ե հրացանի  
կոթով, միլատովը դուռն ե բաց անում և յիս  
մտնում եմ բժշկի մոտ:

Իսկ բժի՛շկը, բժի՛շկը: Արես վկա ասելն ել  
ծիծաղելի յե, — բոլորովին քավթառ ե: Սպի-  
տակ, փոքրիկ, այնքա՞ն փոքրիկ, վոր վոտնե-  
րը խճճվում են խալաթի մեջ: Նրա առաջ, հաս-  
կանո՞ւմ եք, կուրծքը դուրս ցցած, կանգնած ե-

մի աժդահա, կիսամերկ քեռի: Բժիշկը քննում ե  
նրան: Նա խորը շնչում ե: Կարծես ըմբիշ Վասիլ  
Պետուխովը լինի:

Մենք մտնում ենք, իսկ բժիշկն ասում ե.—

— Հարկավոր ե ծկծել դուռը:

Բայց տեսնելով շտարի սպային, բոլորովին  
ուրիշ կերպ ե սկսում խոսել:

— Ներողություն, — ասում ե, — պարոն  
սպա: Յես կարծեցի առանց հերթի յեն մտնում:

— Վո՞չ, — ասում ե սպան, — դուք սխալ-  
վում եք: Մենք խիստ շտապ դործ ունենք: Նե-  
ղություն կրեք, — ասում ե, — ոգնություն ցույց  
տալ ու բաց թողնել հիվանդին:

— Հըմ, — ասում ե բժիշկը, — մեծ հաճույ-  
քով:

Նա սկսում ե ավելի արագ քննել ըմբիշ Պե-  
տուխովին, տեղ-տեղ յոդ ե քսում և բաց թող-  
նում: Ապա մոտենում ե լվացարանին ու սապ-  
նում ձեռները:

— Այո, — ասում ե, — յես ձեզ լսում եմ:

— Ահա, — ասում ե սպան, — տեսնո՞ւմ եք  
այս մարդուն: Մի քանի բովե առաջ այս մարդը  
դիտավորյալ կերպով կծեց ու կտրեց իր լե-  
զում:

— Հ'մ, — ասում ե բժիշկը:

Յեվ հետո.—

— Թույլ տվեք հարցնել, ինչպես կծեց ու  
կտրեց... Բոլորովին, թե մասամբ:

— Յես չգիտեմ, — ասում ե սպան: — Գուցե  
և մասամբ: Բանն այդ չե: Ամենադիսավորն

այն ե, վոր նա այժմ չի կարող խոսել: Հասկա-  
նո՞ւմ եք: Իսկ մեղ հարկավոր ե նրան հար-  
ցաքննել: Զե՞ք կարող մի վորեւ բան անել: Գի-  
տական ճանապարհով: Գոնե մի քիչ խոռի  
մեռնելուց առաջ:

— Տեսնենք, — ասում ե բժիշկը:

Յեվ սկսում ե ձեռները լվանալ:

— Տեսնենք, — ասում ե, — այդ դժվար չե:  
Թեև պետք ե ձեղ հայտնեմ, վոր մեր գիտու-  
թյունն այնքան ել չի թույլ տալիս, վոր մարդը  
խոսի առանց լեզվի: Նայել կարելի յե իհարկե:  
Այդ դժվար չե, այնուամենայնիվ գիտական  
տեսակետից յես չեմ կարող ձեզ մի վորեւ խոս-  
տում տալ: Նայելը կնայեմ, բայց . . .

— Լավ, — ասում ե սպան, — նայեցեք: Մի-  
այն թե չի կարելի շտապել, պարոն բժիշկ:  
Զի՞ կարելի շուտ նայել:

— Կարելի յե, — ասում ե բժիշկը, — ինչո՞ւ  
չի կարելի: Կարելի յե նաև շտապել:

Ու սկսում ե, հասկանո՞ւմ եք, յերեսսրբի  
չով սրբել մատները: Մի մատը սրբում ե, հաս-  
կանո՞ւմ եք, նայում, հբծվում, հետո սկսում  
ե մյուսը: Հետո յերբորդը: Հետո չորրորդը,  
և այլն:

Սպան ուղղակի կատաղում ե: Կրոնկնե-  
րով հատակին ե խփում: Նույնիսկ խթաններն  
են զբնգում:

Իսկ բժիշկն ուշադրություն ել չի դարձ-  
նում, կամաց սրբում ե մատներն ե ինչ վոր  
բան ե մըմուսմ:

Հետո նա մոտենում է ինձ ու ասում: —

— Հապո՛, յերիտասարդ... բաց արա բերանդ:

Յես չեյի ուզում բացել: Բայց մտածեցի: —

«Ի՞նչ կա վոր... մեղք ե, ինչ ե»:

Ու բաց արի:

— Ելի՛, — ասում ե, — բացեք... ավելի լա՛յն:

Յես ավելի լայն եմ բաց անում, ինչքան վոր կարող եմ:

— Ելի՛:

Այստեղ յես համարյա մինչեւ ականջներս  
բաց եմ անում յերախս:

— Ա՛յ այլակես, — ասում ե: — Բավական ե:  
Ծնորհակալ եմ:

Նայեց բերանս, խառնեց իր մաքուը մտ-  
տիկներով ու ասաց: —

— Ո՛վոչ, լեզուն իր տեղն ե:

— Ինչպե՛ս, — ասում ե սպան, — չի՛ կարող  
պատահե՛լ:

— Հավատացնում եմ ձեզ, — ասում ե բժիշ-  
կը, — լեզուն միանգամայն առողջ ե, միայն թի  
կապույտ ե:

— Վո՛չ, վոչ, — ասում ե սպան, — դուք  
սխալվում եք: Յես ինքս լավ տեսա: Թե ինչ-  
պես նա կծեց ու կտրեց:

— Այդ դեպքում նայեցեք, — ասում ե բը-  
ժիշկը:

Ու ցույց ե տալիս սպային բերանս: Այն  
տեղ, հասկանո՞ւմ եք, հանգիստ շարժվում ե  
լեզուս:

Յեկ, վո՞նց զարմացավ սպան: Վո՞նց աչք  
բիրը չորս արեց:

— Լավ, սա ի՞նչ բան ե, — ասում ե, — այդ  
ի՞նչպես կարող եք պատահել: Ի՞նչ ե, այս  
սատանան յերկու լեզո՞ւ ունի թե ինչպես:

— Ո՛վոչ, — ասում ե բժիշկը, — հազիվ թե  
յերկու լեզու... Մի մարդուն յերկու լեզուն շատ  
ե: Գիտությունն այդ չե թուլատրի: Յեկ յես,  
ասում ե, — թեպես գիտական տեսակետից  
հանձն չեմ առնում բացատրել այդ փաստը,  
բայց ե այնպես լեզուն իր տեղն ե:

— Թյո՛ւ, — ասում ե սպան, — ուրեմն նա ինձ  
խարե՞ց: Ուրեմն նա կարո՞ղ ե խոսել: Ուրեմն  
դու, զղվելի կարո՞ղ ես խոսել:

— Այո, — ասում եմ, — կարող եմ:

Եկ այստեղ յես նրան մի այնպիսի խոսք  
ասացի, վոր ներեցեք, լսողը վայր կընկնի ա-  
թուից:

Ինկ նա՞, ի՞նչ եք կարծում, բարկացա՞վ:  
Կարծում եք ոկտեց գոռա՞լ վրաս կամ խփե՞լ:  
Բոլորովին վոչ: Նա սկսեց ծիծաղել: Նա մինչեւ  
անդամ ուրախացավ: Կարծես թե նրան, հաս-  
կանո՞ւմ եք, տան և հինգ ուրելի նվիրեցին:

— Ո՛, — ասում ե, — մի՞թե սա յերազ չե: Մի՞թե ականջներս չխարեցին ինձ: Հապա՛, —  
ասում ե, — կրկնիր ինչ վոր ասացիր...

Յես կրկնեցի: Մի բան ել ավելացրի:  
Դուք, — ասում եմ, — Ձերդ Բարձր Ազնվու-  
թյուն, վերջին փարասն եք և նույնիսկ ավելի  
վատ: Դուք, — ասում եմ...

Հետո նա մոտենում է ինձ ու ասում: —

— Հապա՛, յերիտասարդ...բաց արա բերանդ:

Յես չեյի ուղում բացել: Բայց մտածեցի: —

«Ի՞նչ կա վոր... մե՞ղք ե, ինչ ե»:

Ու բաց արի:

— Ելի՛, — ասում ե, — բացեք... ավելի լա՛յն:

Յես ավելի լայն եմ բաց անում, ինչքան վոր կարող եմ:

— Ելի՛:

Այստեղ յես համարյա մինչեւ ականջներս բաց եմ անում յերախս:

— Ա՛յ այլպես, — ասում ե: — Բավական ե: Շնորհակալ եմ:

Նայեց բերանս, խառնեց իր մաքուր մոտիկներով ու ասաց: —

— Ո՛վոչ, լեզուն իր տեղն ե:

— Ինչպե՛ս, — ասում ե սպան, — չի՛ կարող պատահե՛լ:

— Հավատացնում եմ ձեզ, — ասում ե բժիշկը, — լեզուն միանդամայն առողջ ե, միայն թե կտպույտ ե:

— Վո՛չ, վոչ, — ասում ե սպան, — դուք սխալվում եք: Յես ինքս լավ տեսաւ թե ինչպես նա կծեց ու կտըեց:

— Այդ դեպում նայեցեք, — ասում ե բժիշկը:

Ու ցույց ե տալիս սպային բերանս: Այն տեղ, հասկանո՞ւմ եք, հայդիստ շարժվում ե լեզուս:

Յեկ, վո՞նց զարմացավ սպան: Վո՞նց աչ-  
քիրը չորս արեց:

— Լավ, սա ի՞նչ բան ե, — ասում ե, — այդ  
ի՞նչպիս կարող եք պատահել: Ի՞նչ ե, այս  
առանձնան յերկու լեզո՞ւ ունի թե ինչպես:

— Ո՛վոչ, — ասում ե բժիշկը, — հազիվ թե  
յերկու լեզու... Մի մարդուն յերկու լեզուն շատ  
ե: Գիտությունն այդ չե թուլատրի: Յեկ յես,  
ասում ե, — թե ավետ գիտական տեսակետից  
հանձն չեմ առնում բացատրել այդ փաստը,  
բայց ե այնպես լեզուն իր տեղն ե:

— Թյո՛ւ, — ասում ե սպան, — ուրեմն նա ինձ  
խարե՞ց: Ուրեմն նա կարո՞ղ ե խոսել: Ուրեմն  
դու, զղվելի կարո՞ղ ես խոսել:

— Այո, — ասում եմ, — կարող եմ:

Եկ այստեղ յես նրան մի այնպիսի խոսք  
ասացի, վոր ներեցեք, լսողը վայր կընկնի ա-  
թուից:

Ինկ նա՞, ի՞նչ եք կարծում, բարկացա՞վ:

Կարծում եք ոկտեգ գոռա՞լ վրաս կամ խփե՞լ:  
Բոլորովին վոչ: Նո ոկտեգ ծիծաղել: Նա մինչե-  
անգամ ուրախացավ: Կարծես թե նրան, հաս-  
կանո՞ւմ եք, տասն և հինգ ուրելի նվիրեցին:

— Ո՛, — ասում ե, — մի՞ թե սա յերազ չե:  
Մի՞ թե ականջներս չխարեցին ինձ: Հապա՛, —  
ասում ե, — կրկնիր ինչ վոր ասացիր...

Յես կրկնեցի: Մի բան ել ավելացրի:  
Դուք, — ասում եմ, — Զերդ Բարձր Ազնվու-  
թյուն, զերջին փալասն եք և նույնիսկ ավելի  
վատ: Դուք, — ասում եմ...

Հասկանում եք: Զի կատաղում: Զի խը-  
փում: Ծիծաղում ե, վոնց վոր ձին խրխնջա:  
— Ելի՛, —ասում ե, —ելի՛:

Նույնիսկ հայհոյելն ել ձանձրալի յէ: Ի՞նչ  
կարիք կա: Յես խոմ դրամաֆոն չե՞մ: Կանգնել  
եմ, մի փոքր մռնչում եմ ու լուսմ:

Նա դադարում և ծիծաղելուց, ուղղում և  
իր սպայական սուրբ և հրամայում ե.

— Դուք, —ասում ե, —պարոն բժիշկ, խնդ-  
րեմ մի քիչ դրաղվեք այս կոմիսարով: Մի քիչ  
հանգստացրեք նրան, կարգի բերեք, հետո  
ուղարկեցեք մեզ մոտ, շտար: Իսկ դուք,  
տղերք, հսկեցեք, Ֆիլատովը կմնա այստեղ, իսկ  
Զիկովը կհսկի դրսից: Հետո, Զիկով, նրան  
կրերես շտար:

Սպան ուղղեց իր սուրբ և դուքս վազեց:  
Նրա յետեից Զիկովը: Նրա առաջ բաց արեց  
դուռը: Հաշտում վազում ե նրա յետեից: Հան-  
կարծ նախասենյակում ինչ-վոր մեկը բղա-  
վում ե:

— Ա՛խ:  
— Ի՞նչ ե, ի՞նչ բան ե, —հարցնում ե բժիշ-  
կը:

— Զիկովը դոռում ե. —  
— Վոչինչ: Մի՛ անհանգստանաք: Նորին  
Ազնվությունը սայթաքեց: Իրեն խփեց պա-  
տին:

— Ա՛խ, —ասում ե բժիշկը, —մի՞թե կարելի  
յե այդպես արագ վազել:

Մնացինք յերեքս։ Յես, Ֆիլատովը և  
բժիշկը։

Իսկ բժի՛շկը, բժիշկը։ Թյո՛ւ, արես վկա  
առանց ծիծաղելու չի կարելի մտիկ անել։

Եեթե հարկավոր լինի, այդպիսի բժշկին  
խիելն ու գցելը դատարակ բան ե։ Փայտե գղա-  
լով կարելի յե գլորել։

Բայց տեսնում եմ, վոր այստեղ վոչինչ  
չի գուրս գա։ Նախ՝ Ֆիլատովը փայտի պես  
կանգնել ե իր նազանով։ Հետո—լուսամուտը։  
Թեպետե բաց ե, բայց նրա տակ, հողաթմբի  
վրա հիվանդներն են նստած, — յես նույ-  
նիսկ լավ լսում եմ նրանց ճայները, — իսկ լու-  
սամուտի վրա ինչ ասես վոր չկա, — թիթեղյա  
տուփեր, սրվակներ, սրսկիչներ և ծիու մի  
մեծ գոեխ, յերկար աղիքով։

Զե, յես տեսնում եմ, վոր այստեղ վոչինչ  
չի գուրս գա։ Լուռ կանգնած եմ։

Բժիշկն սկսում ե ինձ բուժել։

— Դե՛հ, ուրեմն, — ասում ե, — յերիտա-  
սարդ. . . ինդրեմ բաց արա բերանդ։

Յես ասում եմ. —

— Ինչո՞ւ համար, ձեր ինչի՞ն ե պետք։

— Յես ուզում եմ համոզվել։

— Լավ համոզվեք։

Ու բաց արի բերանս։ Լեզուս հանեցի։

— Այո՛, — ասում ե բժիշկը, — ձեր լեզուն  
միանգաւայն առողջ ե։ Կարող եմ ուրախացնել  
ձեզ։ Միայն թե չափից գուրս կապույտ ե։ Կար-  
ծես թանաքի մեջ լող ե տվել։ Հը՞։ Դուք, յե-

ըիտասարդ, թանաք չե՞ք խմում, հա՛, հա՛,  
հա՛:

— Զե՛.—ասում եմ յես:

— Այդպես, այդպես: Զեր լնդերքներն  
ուռել են: Հապա՛, — ասում ե, կերեք այս պի-  
րամիդոնը:

Կերա: Վոչի՞նչ: Յես, հասկանո՞ւմ եք, այն  
պես ուտել եյի ուզում, վոր հենց բժշկին ել  
կուտեյի:

— Դուք ի՞նչ ե, — հարցնում ե, — ոազմա-  
գե՞րի յեք:

— Այո, — ասում եմ, — այստեղ իհարկե  
հյուր չեմ յեկել...

— Ուրեմն դուք բոլչեի՞կ եք:

— Յեղել եմ, այո, — ասում եմ յես:

— Ախ', — ասում ե, — նստեցեք, ինչո՞ւ  
յեք կանգնել: Ահա աթուք, խնդրեմ նստեք:

— Զե՛, — ասում եմ, — չնորհակալ եմ: Իմ  
նստելու տեղի վրա հավերժ հիշատակի նշան-  
ներ կան: Յես նստել չեմ կարող: Իսկ յեթե  
յես ապրեյի, չեյի մոռանա ինչ վոր յեղել ե:  
Յես կհիշեյի:

Այստեղ յես, ընկերներ ներողություն,  
շալվարս ցած քաշեցի: Յույց տվի բժշկին:

— Ա'խ, — ասում ե բժիշկը, — ախ, ինչ-  
պիսի դաժանություն:

Իսկ Ֆիլատովը, կարմրամուռթ այլ հայ,  
վանը բաց ե արել բերանը. —

— Ո՛, հո՛, հո՛...

— Այդ ի՞նչ ե, — հարցնում ե բժիշկը:

— Ներողություն, — ասում ե, — Զերդ  
Ազնվություն, կոկորդս բան եր ընկել:

Բժիշկը նոթերը կիտում ե և ասում .—

— Ե՛հ, յերիտասարդ, յեթե ձեզ չգնդա-  
կահարեն, յեկեք, յես ձեզ ելի պիրամիդոն  
կտամ :

— Լավ, — ասում եմ, — կդամ :

Նիծաղում եմ իհարկե: Ինչո՞ւ համար,  
ասեք, մահից հետո պիտի դնամ, ծերուկնե-  
րին վախեցնեմ: Յես Յիսուս—Քրիստոսը չեմ:  
Յես բոլորովին պատրաստվել եմ մեռնել: Իսկ  
կենդանի մնալու, հասկանո՞ւմ եք, հույս  
չունեմ: Այո, մի կաթիլ հույս ել չունեմ:

— Դե՛հ, — ասում ե բժիշկը, — կարող եք  
դնալ:

Իսկ ինքը արագությամբ գնում ե դեպի  
լմացարան, մատները սապնելու:

Ֆիլատովը հրամայում ե.—

— Քայլով մա՛րչ:

Ու պատրաստ ե պահում նազանը:

Նախասենյակով դուրս յեկանք փողոց:  
Զիկովը նստած ե հիվանդների հետ: Նստած  
ե հոգաթմբի վրա և նրանց ինչ-վոր ծիծա-  
ղելի բան ե պատմում: Նըանք քա՛հ, քա՛հ ծի-  
ծաղում են, առամներն են ցույց տալիս:

— Հ՛մ, — ասում են, — հարզանք կոմիսա-  
րին: Հը՛, վո՞նց ե, — ասում են, — ձեզ վոսկե  
առամ դրի՞ն:

Ու բոլորը .—

— Հա՛, հա՛, հա՛, ...

Հասկանո՞ւմ եք, հիմարների համար ծի-  
սղնիի յե այս բոլորը:

Ֆիլատովին ել ե հոհում:  
Յես ասում եմ.—

— Այդպիսի ատամը թող քո ռեխին  
դնեյին... Տամբովի ծուռ բերան:

Բոլորը դարձյալ.—

— Հա՛, հա՛, հա՛, լա՛վ կծեց, կեցցես:  
Զիկովն ինձ պատասխանում ե.—

— Յես տամբովցի յեմ, իսկ դու վո՞րտե-  
ղացի յես, Զհուղստանի՞ց:

Յես ասում եմ.—

— Գիտե՞ս, յես քեզ հետ խոսել ել չեմ  
ուզում, շա՛ն մոռւթ: Մախված, սպիտակ  
բանդիտ,— ասում եմ:

Մտիկ եմ անում,— կարմրել ե Զիկովս:  
Վեր ե կենում, բարձրացնում ե հրացանն  
ու ասում.—

— Հապա շուռ յեկ, քայլով մա՛րշ:

Ու շրխկացնում ե փակաղակը:

Դրանով ուղում ե ասել, յեթե շատ իսո-  
սես, արճիճի նվեր կստանաս:

Յես գնում եմ: Համարյա թե կողք-կող-  
քի յենք դնում: Յես ձախից, իսկ Զիկովն ա-  
ջից: Ու հանկարծ տեսնում եմ, վոր մենք բո-  
լորովին ուրիշ տեղ ենք գնում: Հասկանո՞ւմ  
եք: Մենք գնում ենք վոչ թե դեպի շտաբ,  
այլ բոլորովին հակառակ կողմը, վորտեղ  
գյուղը վերջանում ե:

«Այ' քեզ սատանա, — մտածում եմ, —  
ինչո՞ւ յենք դնում այնտեղ»

Զիկովին հարցնել յես իհարկե չեմ ուզում:  
ինքնասիրությունս թույլ չի տալիս: Լռել եմ:

Զիկովն ասում եմ: —

— Հաղա շուտ-շուտ:

— Այդ եր պակաս, — ասում եմ, պիտի  
վաղեմ ե՞լ:

— Շուտ-շուտ դնա, հիմա՞ր:

Ե՛կ, յես ել արագացրի քայլերս, թեև  
վո՞չ շատ: Մտածում եմ: —

«Հետաքրքիր ե, թե այս ո՞ւր ննք շոս-  
պում: Հարսանի՞ք ենք դնում, ինչ ե՞ք:»

Աւ հենց այդ մտածեցի, մեկ ել տեսնեմ  
մեր դեմ զալիս ե մի ինչ-վոր ծեր գեներալ,  
մի խրտվիլակ կապույտ շտրվարով: Հասկա-  
նո՞ւմ եք, նեխված, զզվելի մի քավթառ:

Գալիս ե ու տմպոմպացնում վոտները:

— Ո՞ւր, — հարցնում ե:

Զիկովը նրա առաջ կանդնում ե ինչպես  
ընդունիած ե և պատասխանում ե: —

Յես, — ասում ե, — Զերդ Գերազանցու-  
թյուն, զերի բոլչեիկին տանում եմ ի կատար  
ածելու:

— Գնդակահարելո՞ւ:

— Այո, Զերդ Գերազանցություն, դնդա-  
կահարելու:

— Դե', զե, ասում ե գեներալը, — ազա՞տ,  
դնացե՞ք... չվրիպես, — ասում ե:

Յեվ, հասկանո՞ւմ եք, այնպես ուրախ

նայեց ինձ վրա, կարծես յես հավ եմ, կամ  
սադ, և նա ճաշին պետք է ինձ ուստի:

— Գնա, տերը քեզ հետ,— ասում ե,- և  
թող չդողդողա քո ձեռքը, վորովհետեւ —ա-  
սում ե,- դու սպանում ես վոչ թե մարդուն,  
այլ սատանային: Հասկացա՞ր:

— Այս,— ասում ե Զիկովը,— հասկացա,  
սատանային:

— Դե՛կ տերը քեզ հետ,— ասաց ու գնաց:  
Ու ելի տմպտմ պացրեց վոտը:

Մենք ել գնացինք:

Ճիշտն ասած չեյի ուզում քայլել: Հաս-  
կանո՞ւմ, եք, վոտքերս չեյին ուզում շարժվել:

Յեղանակը հրաշալի յեր: Այդիներում ա-  
մենուրեք ծաղկել եյին ծառերը ու շողում  
եյին: Թոշուններն եյին ճախրում:

Իսկ դու բարեհաճիր գնալ այդպիսի ու-  
րախ զբոսանքի:

Ախ՝, սատանան տանի... ընկերներ, յես  
յերբեք չեմ մոռանա, թե վոնց եյի քայլում,  
ինչ եյի մտածում:

Յես գնում եմ առջեխց, իսկ Զիկովը յե-  
տեից: Նրա հրացանը շարունակ չխչխկում ե:  
Անգլիական կոչիկները ճռճռում են: Ու շա-  
րունակ լոռում ե այդ Զիկովը: Գոնե մի խոսք  
ասեր, գոնե մի բան դոռար:

Սկզբում գնում ենք դյուղամիջով: Հետո  
գուրս ենք գալիս արոտատեղ, վորտեղ կովերն  
են արածում: Հետո բարակ շավիղով, բռո-  
տանների ու մարագների կողքով ենք գնում:

Ու շարունակ լոռւմ ե այդ Զիկովը:  
Միայն հրացանն ե թափ տալի և անվերջ ու  
անտանելի ճռճռում են նրա կոչիկները:

Ե՛կ, հասկանո՞ւմ եք վորքան տխուր եր...  
Յես մտածում եմ...—

«Դե՛կ, դե՛կ, Պետյա Տրաֆիմով... Բու-  
դյոննովցի, բարձրացրո՛ւ դուխող»:

Զեմ կարողանում, հասկանո՞ւմ եք: Գր-  
րոխս չի բարձրանում:

«Այս, ծանր ե մեռնել վոչ քո նահան-  
գում,— մտածում եմ յես,— թեև նահան-  
գի համար չեմ ցավում: Ինձ համար նահանգս  
վո՞րն ե: Ատաղձազործի, քարտաշի, հովվի  
համար ի՞նչ նահանգ: Կորաեղ հաց, այնտեղ  
կաց: Հայրս մի տեղ ե թաղված, մայրս մի  
ուրիշ տեղ: Միայն կովի ընկերներս են մը-  
նացել: Յեվ, ահա, քեզ հանելուկ, արդյոք  
նրանք դուրս կպրծնե՞ն թակարդից: Ե՛խ,--  
մտածում եմ,— յերեկի ընկեր Զավարուխինի  
գործը վատ ե Տիբի գյուղում: Զախից Շկու-  
րոն ե նեղում, աջից Մամոնտովը, առջևից  
Աւլադայն ե հարձակվում: Սատանա'ն տանի:  
Գուցե և այդ բոլորը իմ պատճառով ե: Գու-  
ցե յես եմ այդ ամբողջ գործը փչացրել»:

Բայց սատանա'ն տանի, այս ո՞ւր ենք  
գնում ու դնում: Ո՞ւր ենք քայլում չարու-  
նակ:

Արդեն գյուղը չի յերեսում, չների հաջոցը  
չի լսվում, իսկ մենք գնում ենք ու գնում:

— Զարժանալի յե, գիտե՞ք...

«Մի՞թե, — մտածում եմ յես, հենց այս-  
տեղ, այն թփի հետևում հարմար չե՞ տեղը,  
կամ ասենք թե հրե'ն, այն ուսիների մոտ...»:

Չե՞ վոր, ընկերներ, յես ել առիթ նմ ու-  
նեցել մարդկանց գնդակահարելու և իմ աչքը  
փորձվել ե:

Ենս մտածում եմ.—

«Այսուեղ, այս թփի մյուս կողմում,  
կամ հրե'ն այն ձորակում տեղը շատ հարմար  
ե մարդու հոգին թոցնելու համար։ Այս Զիկո-  
վը, — մտածում եմ, — իզուր ինձ այնտեղ չի  
տանում»:

Իսկ Զիկովը, հասկանո՞ւմ եք, ինձ տա-  
րավ հենց այնտեղ։

— Հապա՛, — ասում ե կանգնի՛ր։

Կանդ առա: Յեվ դիտեք, հանգիստ մտա-  
ծում եմ.—

«Ինչ արած, մնաս բարով ասա, բուդյոն-  
նովցի»:

Իսկ ո՞ւմ մնաս բարով ասեմ: Շուրջս  
միայն խոտ ե:

Գլուխս շուռ տվիթ և տեսնում եմ, վոր  
Զիկովն իր հրացանն առնում ե թևի տակ,  
ձեռքը տանում ե ծոցն և ինչ-վոր բան ե հա-  
նում։

— Առ, ասում ե, — կպցրու:

Ի՞նչ:

Տեսնում եմ, — ուսադիրներ են: Հասկա-  
նո՞ւմ եք: Վոսկե ուսադիրներ փայլուն աստ-  
ղերով և չորս Փրանսիական քորոցներ:

— Դե՛հ, — ասում ե, — կպցըռու:

— ի՞նչ, — ասում եմ:

Յես, դիտեք, չեմ հասկանում: Ասում եմ —

— Դե՛հ, կորիր, չան մոռւթ: Բավական ե  
հանագ անել:

Իսկ նա. —

— Հիմար, — ասում ե, — շո՛ւտ կպցըռու  
ուսագիրները, քանի դեռ չեն հասել մեզ:  
Լսո՞ւմ ես:

Յես չեմ կարողանում: Արես վկա, կանգ-  
նել եմ հիմարի պես, հասկանո՞ւմ եք:

— Դեհ, հիմար, — ասում ե, բեր յես  
կողցնեմ: Կուացի՛ր — ասում ե, — շո՛ւտ...

Յես կուացա: Նա ճարպկությամբ կպցըրեց  
ուսագիրները, — ամեն մեկը յերկու քորոցով:

— իսկ հիմա, — ասում ե, — փախչենք:

— Ո՞ւր, — հարցնում եմ:

— Ո՞ւր, — ասում ե, — պարզ ե թե ուր.  
Բուդյոննու մոտ:

Եխ, ընկերներ... դիտե՞ք յես քիչ եր մը-  
նում լաց լինեցի: Արես վկա, նստեցի դետնին  
ու չեմ կարողանում վեր կենալ:

— Յեղայրս, — ասում եմ, յեղբայրս,  
Զիկով, մի՞թե մերոնցից ես:

— Մերոնցից եմ, — ասում ե, — ազնիվ  
խոսք... վեր կաց փախչենք Բուդյոննու մոտ:

— Զե՞ւ, — ասում եմ, — սպասի՛ր... չեմ  
կարող:

— Վո՞նց թե, — հարցնում ե, — ինչո՞ւ  
չես կարող:

— Փորումս ինչ-վոր վատ բան ե կատար-  
վում:

Հասկանո՞ւմ եք: Իսկապես վոր փորումս  
ինչ-վոր սարսափելի բան եր կատարվում:  
մտածում եմ, — յերեի կնքամոմն սկսել ե հաշ-  
վել: Կարծես թե կը ակով վառում են կոկոր-  
դրս, կուրծքս, մանավանդ փորս: Հասկա-  
նո՞ւմ եք, բոլոր աղիքներս կարծես սկսում  
են պար դալ և կտոր-կտոր լինել: Յավում են:  
Այնպես ե ցավում, վոր չեմ կարողանում  
վոտքի կանգնել:

«Թյո՛ւ, — մտածում եմ, — գնդակից առ-  
դառվեցի, մի՞թե այսպիսի նողկանքից պիտի  
մեռնեմ: Չե՛, — մտածում եմ, — չեմ ուզում  
մեռնել»:

Եեվ ուզում եմ, վոտքի կանգնել: Ուժիցս  
վեր ճիդ եմ անում, կանգնում եմ ծնկներիս  
վրա և նորից ընկնում:

— Չե՛, — ասում եմ, — հանաք ես անում:  
Վեր կիենաս, այն ել վո՞նց...

Ու նորից, եմ կանգնում, նորից ընկնում:

— Ախ, — ասում եմ, — ի՞նչ փալասն ես:  
Հապա մի մտածեցեք, բուդյոննովցին չի կա-  
րող վոտքի կանգնել: Դե ի՞նչ արած ուրեմն  
այդպես եր բանը: Ուրեմն, — ասում եմ, — յեկ  
մնաս բարով ասենք, ընկեր Զիկով:

Իսկ նա ասում ե. —

— Լավ: Մնաս բարով ասել հետո յել  
կարող ենք: Իսկ դու, — ասում ե, — չե՞ս նի-  
շանա, յեթե յես քեզ չալակեմ:

— Զե՞ւ, — ասում եմ, — չարժեն: Միաք չունի ինձ շալակել: Միևնույն ե, իմ վերջը հասել ե:

— Դեհ թող, — ասում ե: — Քո փոքում ուղղակի հեռագիրն ե մըմուս:

— Ի՞նչ հեռագիր ասում եմ յես:

— Այն, — ասում ե, վոր անուշ ես արել:

— Այ քեզ անխելք, — ասում եմ, — այ քեզ հիմար: Դա, — ասում եմ, — հեռագիր չեր: Դա, ծրար եր, ընկեր Բուդյոննուն ուղղված մի ծրար, վորը յես տանում եյի ու տեղ չհասցըի: Յես, — ասում եմ, — փալաս եմ: Յես կերա իմ դիվիզիայի ամենակարենը ուղերատիվ տեղեկությունները: Դրա համար ինձ դնդակահարելը քիչ ե:

Յեվ յե՞ս, հասկանո՞ւմ եք, ամեն ինչ նրան պատմեցի:

— Իսկ հիմա, թող ինձ ե... փախիր, քանի կենդանի յես:

Յերևակայեցեք նա ինձ վոչինչ չասաց, այլ վերցրեց ինձ, պարկի նման դրեց ուսին և քայլեց դեպի թփերը: Հետո դուքս յեկանք ձորակից: Հետո գուղձերի միջով վազում ե, վոնց ե վազում: Հասկանո՞ւմ եք, ձիերն ել այդպես չեն վազում:

Յես դիմում եմ նրան.

— Զիկով քեզ համար յերեկի դժվար ե:

— Այ քեզ բան, — խոխուս ե: — Յես ասում ե նա, — քեզանից ավելի ծանր մարդկանց եմ շալակել.

Յես նորից եմ դիմում:

— Դու հանդստացիր...

Ինձ համար, հասկանո՞ւմ եք, մի տեսակ  
անհարմար ե մարդուն հեծած դնալ:

— Դու հանդստացիր, — ասում եմ, — Հե-  
տո նորից կշարակես:

— Մի հակառակի, — պատասխանում ե: —  
Հրեն մինչեւ են անտառը կհասնենք, հետո կը-  
տեսնենք:

Մտիկ եմ անում, — անտառը մոտիկ չե:  
Մինչ անտառը, հասկանո՞ւմ եք, յերկու վերստ  
կլինի:

Ե՛Կ, մենք այնպես արագ եյինք սլանում,  
վոր տասը բողեյից հետո արդեն ան-  
տառում եյինք:

— Բոռ' լու, — ասում եմ, — հասանք...

Զիկովն ինձ իջեցնում ե զետին և յես, յե-  
րեակայեցեք, հանդիստ կանգնում եմ վոտի:

Այ քեզ հրաշք:

Գիտե՞ք, յերբ յես Զիկովի շալակին սը-  
լացել եմ դաշտի միջով, փորումս ամեն ինչ  
մի փոքր հանդարտվել ե: Ու կարծես թե թե-  
թեացել եմ: Կարծես այնքան ել ցավ չեմ  
զդում:

— Այ քեզ բա՛խտ: Դեհ, — ասում եմ, ա-  
ռի շարունակենք փախչել:

Զիկովը պատասխանում ե: —

— Վոչ, սպասիր... չեմ կարող:

— Վո՞նց թե, ինչո՞ւ չես կարող:

— Յես, —ասում ե խոմ ձի չե՞մ: Առանց  
հանդստանալու չեմ կարող:

Տեսնում եմ, վոր իսկապես տղան քրտնել  
ե:

Մենք նստեցինք բարձր ծառի տակ, յես  
մեկնվեցի կանաչի մրա, իսկ Զիկովը հանեց  
ծխախտը և ծխել սկսեց:

— Այնուամենայնիվ, Զիկով, յես չեմ  
հասկանում, ո՞վ ես դու:

— Յե՞ս, —հարցնում ե, — յես ծախվող  
մորթեպաշտ եմ: Յես, —ասում ե, — անգլիա-  
կան դրատի համար ծախվեցի Մամոնտովին:

— Ե՛հ, — ասում եմ, —ստում ես, Զիկով:

— Կարելի յե ստում եմ, — ասում ե նա:  
Ճիշտ ե, —ինձ զինվոր տարան: յես իմ ցան-  
կության հակառակ, չորբորդ ամիսն ե, վոր  
սպիտակների մոտ եմ:

Յեկ այստեղ նա, հասկանո՞ւմ եք, ինձ  
պատմեց ամեն ինչ:

Պատմեց, թե ինչպես գերմանական ռազ-  
մաճակատից տուն ե յեկել, ինչպես նրա տնտե-  
սությունը կործանվել ե, ինչպես թաղել ե  
տիֆից մեռած կնոջը, ինչպես տերտերի մոտ  
մշակ ե յեղել և այլն, և ինչպես հետո նրան  
ըսնությամբ զինվոր են տարել, հրացան են  
տվել և հրամայել են կրակել բոլշևիկների  
վրա:

«Կրակեր, — ասում են, — վառութը մի  
խնայիր: Վորովչետե, — ասում են, — բոլշևիկ-

ները մարդիկ չեն, այլ մարդկության թշնամիները...»:

Յես հարցնում եմ .—

— Յեվ դու կրակո՞ւմ եյիր:

— Վո՞չ, — ասում ե, — յես հրացանի կողով եյի գործում:

— Վո՞նց թե հրացանի կոթով, — ասում եմ, — ուրեմն դու սպանո՞ւմ եյիր:

— Ազնիվ խոսք, — ասում ե, միայն մի մարդ եմ սպանել: Այն ել մեր սպային: Մեր սպային, Գիրելին:

— Այդ ինչ Գիրել ե, — հարցնում եմ:

— Նա վոր քեզ ապտակեց:

Վո՞նց, — հարցնում եմ, — ա՞յդ քեզ բան, այդ յե՞րբ կարողացար:

— Յես նրան տկարանոցում, հրացանի կոթով խփեցի, յերբ դու պիրամիուն եյիր ուտում:

Ա՛խ, սատանա': Յերևակայեցեք, ինչ ճար պիկ տղա յե: Նա հրացանի կոթի մի հարվածով գլորել ե սպային: Հիշո՞ւմ եք, յերբ բըժիշկը հարցըց, թե ո՞վ ե այնտեղ դուռում: Ուրեմն այդ Գիրելն եր գոռում: Այն ժամանակ Զիկովը նրան նստարանի տակ եր խոթում:

— Յես, — ասում ե Զիկովը, — նախասենյակում ի միջի այլոց քեզ համար ուսադիրներ գտա: Զե, — ասում ե, — մի վախենա, հանգուցյալի ուսադիրներ չեն ... Այստեղ

բժշկի բանկոնն եր կախված։ Յես հենց այդ  
բանկոնից պոկեցի։ Դու, — ասում ե, գի՞տես  
հիմա ով ես։ Հիմա դու բժիշկ ես։

— Թյո՛ւ, — ասում եմ։

Յեվ հետո. —

— Զիկով, հապա ինչո՞ւ դու, սատա-  
նա, այն ժամանակ հիմարություն եյիր ա-  
նում։ Ինչո՞ւ հայհոյում եյիր ինձ։

— Հայհոյո՞ւմ եյի, — հարցնում ե, իսկ  
ինչ ե, զու ուզում եյիր վոր համբռւրե՞մ։ Վոր  
քեզ «թանկադին ընկե՞ր» ասեմ։ Այդ դեպքում,  
թանկադին ընկեր, ինձ ու քեզ մի ծառից կկա-  
խեցին։

— Ճիշտ ե, — ասում եմ, — ճիշտ ե Զի-  
կով։ Ա'լս, այ թե ճարպիկ տղա յես, հա՞ա,  
Զիկով։

Իսկ նա թե՝

— Այս, հիմա ինձ համար այսպիսի հարց  
ե ծագում, — ասա, ձերոնց մոտ ինձ կդնդա-  
կահարե՞ն թե վոչ, յեթե այնտեղ անցնեմ։

— Դեհ լավ, թող, — ասում եմ : — Ի՞նչ  
ե, զեներա՞լ ես, կամ զնդապե՞ա :

— Վո՛չ, հասարակ զինվոր եմ։

— Ե՛հ, ել ինչո՞ւ մենք քեզ պիտի զնդա-  
կահարենք։ Մենք զնդակահարում ենք թշնա-  
միներին, կապիտալիստներին, իսկ դո՞ւ ով  
ես։ Զե՞ վոր դու կապիտալիստ չես։ Դու  
բուրժուակոն դասակարգից չես . . .

— Յես, — ասում ե, — եղ տեսակ խոս-  
քիր չեմ հասկանում։ Բայց յես ավարտել եմ

Դյուղի ծխական դպրոցը։ Յերկու դասարան։  
Հետո հերս ինձ տվեց հովվության։

— Ո՞հո, — ասում եմ, — ուրեմն յես ու  
դու միենույն կոչումն ունենք։ Յես ել հովիվ  
եմ յեղել։ Բա մենակ յե՞ս եմ, մեր ամբողջ  
բանակը բաղկացած ե հովիվներից, ներկա-  
րարներից ու քարտաշներից։ Մեղ մոտ, — ա-  
սում եմ, — քեզ այնպես կընդունեն, վոր քեֆդ  
դա։ Մեր մարդն ես, դեղջուկ։ Ել վո՞րտեղ  
պիտի ծառայես, յեթե վոչ Բուդյոննու բանա-  
կում։

— Ճիշտ ե, — ասում ե, — ինձ համար  
կազմուկների մեջ ծառայելը հարմար չե։ Յես  
վաղուց ե, վոր յերազում եմ Բուդյոննու  
մասին։ Հասկանո՞ւմ ես, յես շատ եմ ուզում  
տեսնել նրան։ Ինչպիսի՞ն ե այդ Բուդյոննին։  
Դու տեսե՞լ ես նրան։

— Այո, տեսել եմ։ Միայն թե պատի վը-  
րա։ Նա մեր շտաբում փակցված ե պատի  
վրա, սպիտակ ձիուն նստած։

— Իսկ նո նախկին սպաների՞ց ե, —  
հարցնում ե Գիկովը։

— Այդ եր պակաս, ի՞նչ ե, խենթացն՞է  
ես։ Զե՞ վոր նա մի ամբողջ բանակի հրամա-  
նատար ե։

— Ուրեմն դեներալների՞ց ե։

— Վո՞չ, վոչ, — ասում եմ, — նախկին  
բատրակներից ե։ Յերեակայիր, մեղ նահան-  
գի զեղչուկներից ե։ Ասենք դու ինքդ կտես-  
նես։ Յեթե մենք լուգանսկ հասնենք և յես

Բուղյոննուն տեսնեմ, քեզ անայման կծանո-  
թացնեմ նրա հետ:

— Գիտե՞ս ի՞նչ, — ասում ե Զիկովը, — վոր  
այդպես ե աբի շուտ գնանք, վնտուենք ճանա-  
պարհը:

— Գնանք, — ասում եմ:

Իսկ ինքս հասկանո՞ւմ եք, չեմ կարողա-  
նում վեր կենալ: Վատացավ վիճակս:

Զիկովը բարձրացնում ե ինձ և յես մի կերպ  
քայլում եմ:

Քայլեցինք անտառի միջով և դուրս յե-  
կանք դաշտ:

Հիշում եմ, յերբ դաշտ դուրս յեկանք, Զի-  
կովը հարցրեց: —

— Ասա, ինչո՞ւ համար մեր պահակին  
դմիեցիր:

— Վո՞նց թե դմիեցի: Յես նրան չեմ  
դմիել: Նրան յերեկի մի խելազար ե սպանել:

Ու հենց այդ ասացի, — յերևակայեցեք,  
թփերի միջից դուրս յեկավ մի զեղջուկ: Այն  
խելազար գեղջուկը, վորը հիշո՞ւմ եք, ինձ վա-  
խեցրեց և վորին յես ատքճանակով նշան բռնե-  
ցի:

Մեր դեմ ե գալիս, — ցնցոտիներով, պատա-  
ռոտված շորերով և յերևակայեցեք, զարձյալ  
ժպտում ե: Ելի՛ ինչ վոր բան ե վնթփնթում և  
ֆշում:

Յես վախեցա: Կանգնեցի և սառնասիրտ  
դեմք ընդունեցի:

— Ա'ա, ծանոթ դեմք ե:

— Այս ո՞վ ե, — հարցնում ե Զիկովը:

Հենց նա յե, վոր քարով սպանել ե ձեր  
պահակին:

Հետո ասում եմ. —

— Այդ ի՞նչ բան ե, աղբերացու, ուրիշի  
անցագրով մարդկա՞նց ես սպանում: Հը՞: Դի  
տե՞ս վոր քո պատճառով քիչ եր մնում ինձ կա-  
խելին: Դիտե՞ս, — ասում եմ, — ինչո՞ւ, յես  
մարդկանց սպանում:

Իսկ նա պատասխանում ե. —

— Այո, — ասում ե, — սպանել եմ և ովետք ե  
սպանեմ: Յես ձեզ, բոլորիդ կվոչնչացնեմ:  
Մամոնտովի ցեղ:

Ու տեսնում եմ, — նայում ե ձախ ուսիս: Իսկ  
այնտեղ, հասկանո՞ւմ եք, ձախ ուսիս վրա ու-  
ստդիրն ե փայլում:

— Յես, ասում ե, — ձեզ ել չեմ խնայի: Ձեզ  
ել կուղարկեմ դրախտ, աստծո մոտ, շան լա-  
կոտներ:

Կուանում ե ու քար ե վերցնում:

— Սպասի՛ր, — գոռում եմ, — սպասի՛ր, խե-  
լադա՛ր:

Յեվ այստեղ, հասկանո՞ւմ եք, վը՛զզ:

Հենց գլխիս վրայով թռչում ե քարը:  
Դլխիցս միայն մի մատ վերև:

Յես կատաղեցի:

— Դեհ սպասի՛ր:

Իսկ նա, յերեակայեցեք, վազում ե մինչև  
խանդակը, կուանում ե ու հավաքում քարի  
կտորները: Ու այնտեղից, հասկանո՞ւմ եք, դա-

բանից սկսում եւ քարկոծել մեզ։ Յերկու անգամ  
դիպավ ականջիս ու հարծեմ Զիկովի կրծքին ու  
քթին։

— Բռնի՛ր նրան, Զիկով, ել ի՞նչ ես սպա-  
ռում։

Մենք յերկուսով հարձակվեցինք այդ խե-  
լազարի վրա։ Զիկովը վոտներին և խփում, իսկ  
յիս թեւքիս մեջ եմ առել և զցում եմ զետին….

Իսկ նա ուժեղ եւ։ Անիծված խելազարները  
բոլորն ել ուժեղ են։ Նա գես-դեն և զցում,  
ֆշշում եւ, կծում, —անհնարին և նրան վայր  
դցել։ Յեփ շարունակ բոռում եւ։

— Ոճե՛ր, չներ, բուրժույի լակոտներ…

Յես հանեցի դոտիս, —այդ յուրահատուկ  
մի դոտի յեր, ամուր, փափուկ կաշուց, —և  
մենք խելազարին մի կերպ կապեցինք։ Բերանը  
խոտ կոխեցինք, վոր չդոռա։ Հետո կյսպիպած  
դցեցինք խանդակը։ Թող պառկի և հանգըս-  
տանա։

Ու պատրաստվում եյինք շարունակել ճա-  
նապարհներս, յերբ դոփյուն լսեցինք։ Կաղակ-  
ների պարհիներ։ Հասկանո՞ւմ եք։ Ուղղակի  
մեր վրա յին սրանում։

— Կանգնի՛ր, —ասում են, —ովքե՞ր եք, վո՞ր  
տեղից։

«Ե՛կ, —մտածում եմ, —Պետյա Տրաֆիմով,  
կորար»։

Պոլզել եմ զետնին և չեմ կարողանում վեր  
կենալ։

իսկ Զիկովը, դիտե՞ք, չկորցրեց իրեն:  
Նա զվարթ ոլատասխանեց.—

— Այսպես, այնուեւ... զեներալ Մամոն-  
տովի անձնական ռուբ՛րանդակներն ենք:

— Ո՞ւր եք դնում:

— Գնում ենք, —ասում ե, —կորրատովո  
գյուղը, տեղեկություն ենք տանում գնդապետ  
Շտելսելին:

— Այդպե՞ս, —ասում են, —լավ ե, հապա  
դարձեք դեպի շտար:

— Ինչու համար:

— Վորովհե՛տե: Այնտեղ կպարզենք:

Ու տեսնում եմ, —նայում են ուսադիրնե-  
րիս: Մուայլ ծիծաղում են: Իրը թե մենք ամեն  
ինչ հասկանում ենք: Մեր աչքերը փորձված են:  
Մեզ չեք խաբի:

Բայց Զիկովն ել հիմար չե: Նա յել ե նա-  
յում իմ ուսադիրներիս և ինչ-վոր բան ե մըս-  
մտում:

— Դուք դիտե՞ք ի միջի այլոց, —ասում  
ե, —թե ով ե այնտեղ նստած: Նա, —ասում ե, —  
զենիկինյան բանակի ամենազլիսավոր բժիշկն  
ե: Նա հենց նոր ե փախել խորհրդային դերու-  
թյունից, հիմա նրան շտապ հարկավոր ե հաս-  
նել Դենիկինին: Իսկ յես նրա անձնական պա-  
հակն եմ: Հասկանո՞ւմ եք:

Նրանք ասում են.—

— Սույն ես խոսում:

— Եեթե դուք համարձակվեք մեզ պահել,  
Մամոնտովից ենալիսի մի պատիժ կստանաք,

վոր ճիպոտը չի բավականանա : Յի՞շտ ե , —  
ուստին բժիշկ :

Իսկ յես կծկվել եցի : Յես ուղղակի շիռթ-  
վեցի ու չդիտեցի ինչ ասեմ :

— Այս , — ասում եմ . — զուք , տղերք , եկախա-  
վեք առաջին պատահած ճառից : Դուք , — ասում  
եմ , — հիմար անասուններ եք : Ի՞նչ իրավունք  
ունեք այդպես վարվել աղնվաղարմ մարզու-  
հեա : — Գիտությունն այդ թույլ չի տալիս :

Ե՛ւ , նրանք բոլորը մի անգամից գլխարկ-  
ները հանեցին և սկսեցին ծոծրակները քորել :  
Մեր բախտից ինչ-վոր մեկն ել մոտեցավ : Կա-  
զակ եր : Նա ճանաչում եր Զիկովին : — Նա ա-  
սում ե :

— Ո՞ս՞ո՞ , Զիկով :

Զիկովը սկստասխանում ե . —

— Բարե , Պետրով (կամ թե Իվանով) :  
Յերեակայիր թե ինչ : Ինձ ճանաչել չեն ու-  
զում :

— Վո՞նց թե , տղերք : Դա Զիկովն ե :  
Առաջին եսկադրոնից : Մեր պահեստապետի  
համհարդը :

Այստեղ բանդիտները բոլորովին հավա-  
տացին , վոր յես բժիշկ եմ , իսկ Զիկովը իմ  
համհարդը :

— Խնդրեմ , — ասացին , կարող եք զնալ :  
Ինձ ել ասացին . —

— Ներեցեք , Զերդ Աղնվություն : Մենք  
դիտմամբ չարինք :

— Ել ինչ ներողություն . . . լավ : Գիտու-  
թյունն այդ թույլ ե տալիս :

Ու գնացի : Զիկովն ել իմ հետեխց գնում ե  
համհարզի պես :

Իսկ նրանք մեր հետեխց գոռում են .—

— Լսեք, հե՛յ... լսեք :

Ել ի՞նչ կա, — հարցնում եմ : Կանզնեցի :  
Իսկ Զիկովը փսփսում ե ականջիս .

— Ասա, մի բան ասա, ա՛յ աղա... .

Նրանք տսում են .—

— Դուք, պարոն բժիշկ, աջ կողմը մի  
դնաք :

— Ի՞նչ կա վոր :

— Այնտեղ, առվակից այն կողմը բուդյոն-  
նովցիների խրամատներն են :

— Բուդյոննովցիների<sup>o</sup>, — ասում եմ .— ո՛ո,  
սարսափի : Լավ, — ասում եմ, — չենք դնա :

Մերսի :— կարող եք դնալ :

Նրանք ծիերը նստեցին ու գնացին :

Իսկ մենք իսկույն շարժվեցինք դեպի այն  
խանդակը, վորտեղ, հիշո՞ւմ եք, խելադա-  
րին թողինք : Մենք կարծում եյինք թե նա  
անշնչացել ե, բայց նա չկար : Դես ու դեն ըն-  
կանք, յերեակայեցեք, խելագարը չքացել եք :  
Միայն գոտիս եր ընկած խանդակում, այն ել  
կտրվել, կես եր յեղել :

Ո՛ո, յես այն ժամանակ հիմար եյի, ինչ-  
քան ափսոսացի գոտուս, քիչ եր մնում լաց  
լինեյի : Զիկովը ծիծաղում ե ու ասում .—  
«Այ քեզ դոմեշ, ա՛մա ուժեղ ե, հա՛ա» : Իսկ  
յես համարյա լաց եմ լինում : Մանավանդ վոր  
այդ դոտին յես դնել եյի : մեր դասակազե-

տից՝ չորս կտոր շաքարով և նա չեր մաշ-  
վում։ Այնպիսի ճկուն գոտի յեր, խողի կա-  
շուց։ Քանին մարդ քաշեցին, չեցին կտրի։  
Իսկ այստեղ մեկ մարդ կտրել և... կամ թե  
առամներով կըծել, — չդիտեմ։

Կանզնել ու հառաջում եմ. մեկ ել հան-  
կարծ տեսնեմ Զիկովն ել և նոթերը կիտել և  
ինչվոր բան և մտածում։ Կարծես ինչվոր  
իր և կորցրել, կամ տանը թողել։

— Ի՞նչ ե, — հարցնում եմ, — ի՞նչ պա-  
տահեց քեզ։

— Սպասի՛ր, — ասում ե, — մի խանդարիր։

Նայում ե ինքն իր վրա, շոշափում է ձեռ-  
քերը ու ճակատը սրբում։

— Յես — ասում ե, — մոռացա... ոս վո՞ր  
ձեռքն ե։

— Ջախ։

— Իսկ սա՞։

— Աջ։

— Ե՛, փա՛ռք աստծո, Գնանք այս կողմ,  
աջ ձեռքիս կողմը,

— Հյ՛մ, — ասում եմ, — հասկանում եմ։  
Աջ կողմը։ Դեպի առվակը... Բուդյոննու մոտ։  
Այդպես ել անենք։ Ծլկենք, Վասյա...։

Դեն դցեցի իմ նախկին դուտին և հասկա-  
նո՞ւմ եք, այնպես զվարթ քայլեցի, վոր  
ինքս ել զարմացա։ Բայց վո՞չ յերկար։ Մի  
քի՛չ քայլեցի ու նորից կոշտուկս մրմռաց,  
նորից փորս դըրդուաց ու ցալեց կոնակս։

Գնում եմ մի կերպ.

«Ե՛հ, — մտածում եմ, — ա՛մա հերոսն ես

հա: Թրջված հավ: Քեզ նմանները թնդանոթ-  
ների տակից գորտեր պիտի քշեն և վոչ թե  
իշխանության համար պայքարեն»:

Զիկովը գնաց, գնաց ու կանդ առավ:

— Կանդնի՛ր, — ասում ե. — դու վոչինչ  
չե՞ս լսում:

— Վո՛չ, — ասում եմ:

Կանդնեցի, ականջ արի:

Յեվ իսկապես, ինչ-վոր մի տեղ հեռո՛ւ,  
հեռու կարծես սիսեռ եյին կալսում:

— Ինչ-վոր ճքճքոց ե լսվում:

— Կրակում են դնդացրից... կոյլտից են կրա-  
կում: Զգո՞ւմ ես, թե ձերոնք վոնց են մերոնց  
վրա տալի:

— Այո, — զգում եմ:

Մենք ելի՛ արագ ենք գնում: Հասնում ենք  
ճանապարհը: Փոշոտ ճանապարհով ուղիղ դե-  
պի արեն ենք գնում:

Իսկ արեն արդեն մայր ե մտնում, ար-  
դեն մթնում ե և քանի դնում այնքան բարձր  
ե լսվում մերթ աջից ու մերթ ձախից, —  
բո՞ւմ, բա՛խ:

— Ե՛հ, — ասում ե Զիկովը, — բավական  
ե: Արի՛ հանենք այդ անպետք բաները:

— Ի՞նչը հանենք,

— Ուսաղիբներդ, — ասում ե. Հանիր,  
բավական ե, ինչքան ֆասոն բանեցրիր: Հա-  
վատո՞ւմ ես, աղբեր, ուսերիդ վրա կոշտուկ-  
ներ յեղան:

— Յամանակն ե հանե՞ւ, — հարցըրի:

— Հենց լավ ժամանակն ե, — ասում ե: Թողեք պարոն բժիշկ, ես ինքս հանեմ:

Աւ սկսում ե պոկել ուսերիցս զենիկինցան ուսադիբները: Գլուխս չուռ ևմ տալիս ու տեսնում, վոր նա մի տեսակ չար դեմք ե ընդունել: Վոչ թե ուսադիբներ ե հանում, այլ ինչ-օլոր կեղտոտ բան: Կարծես վերքն ե սեղմաւմ թարախ դուրս բերելու համար, կամ վո՞չիլ ե փնտում: Քորոցն ել ժանդոտ եր և շեր պոկիլում: Քաշում ե հա քաշում:

— Ե՛հ, — ասում ե, — անտե՛ր:

Քաշեց ե հայվանը ուսադիբների հետ միսս ել կորեց: Վերնաշապկիս մի ահապին կտորը պոկվեց:

— Մեկը հանեցի, — ասում ե, — դարձիր, մյուսը հանենք:

Հենց նոր եր յերկըորդ ուսադիրս հանել ե դեպի խանդակը չպրոել, յերբ ինչ-վոր դոփյան լսեցինք:

Ելի՛, հասկանո՞ւմ եք, դեռ աչք չելինք բացել, դեռ չելինք փոշտացել, — ելի՛ ձիավոր պարեկ ե ոլանում: Յեկ ուղղակի մեղ վրա:

— Փախիր, — ասում ե Զիկովը, — վախիր, յեթե ուղում ես ապրել:

Եեվ նա այնպես վաղեց, վոր կարծես մտրակով խիեցին նրան:

Եես ել վաղեցի: Ել չպիտեմ ինչպես եյի վաղում, դիտեմ միայն, վոր Զիկովից հետ չելի մնում: Զիավորներն իհարկե մեղ կհասնելին: Անտառում հեշտությամբ կարելի յե ճո-

զուգբել հեծելազորից, իսկ բաց ճանապարհով  
այդ այնքան ել հեշտ չե: Զե՞ վոր նրանք  
ձիավոր են:

Ձիերի ոմքակների ճայն ավելի ու ավելի  
մոտիկից ե լովում: Ու մեկ ել տրա՛ախկ:  
Հենց գլխիս վերև վզզում ե գնդակը:  
Տրա՛խկ,— նորից...

Ու այնպես են կրակում բերդաններից,  
վոր մարդու մեջքը պաղում ե:

Ձիկովն ասում ե ինձ.—

— Սիրելիս, աղբե՛րս:

Յես ասում եմ .—

— Ի՞նչ ե:

— Սիրելիս... ընկերա... հետ մի մնա:  
Նայում եմ նրան. գունատված վազում ե,  
աշքերը չռել ե շրթունքների վրա թուք և  
դուրս ւայել:

—Վազիր՝, —ասում ե, —վազիր, խնըղ-  
րեմ... Հետ մի՛ մնա, սիրելիս...

Ո՞ֆ, վոնց վոր յերեվում ե, տղան չեր ու-  
զում վերադառնալ Մամոնտովի մոտ: Յերեսում  
ե, վոր խսկապես ուզում եր մեռնելուց առաջ  
տեսնել Բուջյոննուն:

Յես ել չեյի ուզում մեռնել: Յես թուչում  
եյի Որլովի նժույգների պես:

Վազում ենք, հասկանո՞ւմ եք, իսկ մեր  
շուրջն այնպիսի փոշի յե, ինչպես հրդեհից ա-  
ռաջացած ծուխ: Ճանապարհը չի յերեվում:  
Ձիկովին ել համարյա չեմ տեսնում: Մեր յե-  
տեվից ճարճատում են հրացանները:

— տրա՛խկ, տրա՛խկ:

Հանկարծ Զիկովն ինձ ինչ-վոր բան խսաց:  
Վոչ թե ասաց, այլ դոչեց. —

— Ո՞ֆ:

Կամ՝

— Ու՞ֆ:

Յես չեմ հիշում:

Նայեցի նրա կողմն և ի՞նչ եմ տեսնում, — Զիկովս ընկել ե յերեսի վրա, պառկել ճանապարհին, թուշն արյունակարվել ե, իսկ քիթը հողի մեջ ե խրվել:

Իսկ մեր յետեից — տրա՛խկ, տրա՛խկ:

Յես վաղեցի: Առաջ: Զեմ կարող: Զեմ կարող վաղել: Հետ եմ աճապարում ու կանչում եմ. —

— Զիկով, վեր կաց, սատանա: Իսկ նա չի վեր կենում: Զի շարժվում: Հողն և հոտոտում:

Բռնում եմ նրա ուսը: Թափահարում եմ ինչքան ույժ ունեմ:

— Զիկով, — սառւմ եմ, — հերիք ե հիմարություն անես: Վեր կաց... .

Բայց այստեղ, հենց գլխիս վերև՝

— Կանզնի՛ր: Զեռքերդ վե՛ր:

Բարձրացնում եմ այս իմ կորած գլուխն և ի՞նչ եմ տեսնում... .

Մն՛յր իմ հարազատ... . զինվորական ճմլված գլխարկների վրա տեսնում եմ կարմիր բանակալին աստղեր:

Այդ ըստեյին, վորքան հիշում եմ, նստել եյի հենց փոշու մեջ, վորտեղ Զիկովն եր պառկած, և ասացի. —

— Ընկերնե՛ր, այս ի՞նչ բան ե: Ինչո՞ւ հա-  
մար: Զե՞վոր դուք մեր ընկերոջն սպանեցիք:

— Թո՛ղ, — ասում են, — մի մողոնիր: Մե-  
րոնց վրա ուսաղիրներ չեն փայլում:

— Լավ, — ասում եմ, — թեկուղ ուսաղիրնե-  
րով ե, բայց և այնպես մերն ե:

— Ճիշտ ե, — ասում են, — դու ճիշտ ասու-  
ցիր, վոր ձերն ե....

Իսկ նրանց դասակի հրամաննոտարը, մար-  
տական մի տղա, ծիծաղում ե, ու ասում. —

— Ո՛հո, — ասում ե, — ուսաղիրները  
մսի հետ ե պոկել: Վախեցել ե սպիտակ բան-  
դիտը:

— Դու ինքդ ես բանդիտ, — ասում եմ, — դի-  
տե՞ս, այդ վիրավորանքի համար յես քեզ... .

«Սա ի՞նչ պատանա յե, — մտածում եմ, —  
հասել եմ մերոնց և այսպես են դիմավո-  
րում»....

Եես ասում եմ. —

— Քո ատամներիդ հաշիվը կտեսնեմ:  
իսկ նա պատասխանում ե. —

— Ասվ, հետո՛ հաշիվ կտեսնենք: Ընկեր-  
ներ, — հրամայում ե, — սպանվածին խուզար-  
կել, իսկ այս հաշվետարին քշեցնք Բանդու-  
րովո, կոմիսարի մոտ:

Եես այստեղ միայն հասկեցա:

— Ի՞նչ ե, — ասում եմ, — դուք կարծում-  
եք յես սպիտակ եմ:

— Վոչ, — ասում են, — դու յերեվի գորշա-  
գույն-ղարչնագույն-մոխրագույն ես:

Զիկովը դեռ ընկած և փոշում եղջ: Նբան չում  
են տալիս մեջքի վրա, կողքի վրա և պրալում  
են բոլոր դրալաները:

— Դեռ չնչում ե:

— Լավ, — ասում և դասակապետը, — թող  
չնչի: Այսոր յեղանակը հրաժայի յե:

Զիկովի գրալանից թղթեր են հանում:  
կարդում են. — «Վասիլիյ Սեմյոնիչ Զիկով,  
գեներալ Մամոնտովի կազակական կամավոր  
գլուխողիայի առաջին եսկադրոնի շարքային  
զինվոր»:

— Հ՞մ, — ասում ե, դասակապետը: Նա  
մերն ե: Ամեն բանից յերեսում ե, վոր մերն ե:  
Հապա տղերք, — ասում ե, վերցրեք ձիու վը-  
րա:

Ինձ ել ասում ե. —

— Հապա՝ զինվոր... առաջ, — հանուն  
աստծո, թագավորի և հայրենիքի:

— Ո՛վոչ, — ասում եմ, — յես չեմ թողնի  
իմ ընկերոջը: Վերցրեք նրան ձեզ հետ, լսու՞մ  
եք:

— Ներողություն, — պատասխանում են, —  
մենք դիակառք չենք վերցրել հետներս:

— Յես, — ասում եմ, — առանց նրան չեմ  
գնա:

— Զե՞ս գնա: Ձի՞՞շտ: Կատակ չե՞ս անում:  
Ե՞ւ, յեթե այդպես ե, ինքու շալակիր նրան:  
Համաձա՞յն ես:

Ծիծաղում են հիմարները:

Իսկ յե՞ս, — ի՞նչ եք կարծում, — յես լարեցի  
ուժերս, խոտեցի Զիկովին և դրի ուսիս:

Ե՛հ, ծանր եր իհարկե, բայց և այնպես չընկա,  
Զիկովին վայր չգցեցի և կանգնած եյի վոտ-  
ներիս վրա:

Մենք առաջ շարժվեցինք:

Առջեց գնում են յերկուսը—պարեկները,  
ճախից մեկը, աջից ել մեկը, հետեվից—դասա-  
կապետն սպիտակ ձիու վրա, իսկ մեջտեղում—  
Զիկովն ինձ վրա: Իհարկե իմ վոտները պայ-  
տած չեն և յես ուժ չունեմ արագ վազելու:  
Մանավանդ, վոր կոշտուկներս, մեջքս...ինք-  
ներդ դիտեք: Յես այնքան ել արագ չեմ գնում:  
Ուրախ ել չեմ:

Գնում եմ հարբածի պես: Աչքերս փակվում  
են, վոտքեւս դողդողում, —ուղղակի հերոս եմ  
և ուրիշ վոչինչ: Ու շարունակ դիպչում եմ  
ձիերին: Շարունակ դոռում են վրաս.—

— Ե՞յ, սպիտակ, մի խրտնեցնի ձիե-  
րին... խրտվիլա՞կ:

Յես ասում եմ.—

— Ներողություն: Անդգուշությունից եր:  
Ու շարունակում եմ գնալ: Ինձ համար, գիտե՞ք,  
միւնույն ե, դոռում են, թե չե: Թող դոռան:  
Գլխումս այնպիսի շիլա-փլավ ե, վոր մտածել  
ել չեմ ուզում:

Մտածում եմ միայն, վոր հիմար քան ե:  
Այնպիսի հիմար բան, վոր սոսկալի յե:  
Սոսկալի հիմար բան ե: Հապա մի յերեվակայեց-  
ցե՞ք, բուդյոննովցին դերի ընկավ Բուդյոն-  
նուն:

Բայց և այնպես յես հանգիստ եմ:

ԶԵ՞ վոր մերոնք են, սատանան մանի: ԶԵ՞ վոր մերոնք են, աստղերով: Մի՞թե յես հույս ունեյի, վոր կտեսնեմ մերոնց, աստղերով: Վո՛չ, յերեք հույս չունեյի: Կողքերից զոփում են սմբակները: Գլխում ել դոփիյուն ե: Ուսիս վրա յել Զիկովը ըոպե առ ըոպե յերերովում ե:

«Ախ, —մտածում եմ, —խեղճ Զիկով: Էնկար դու բոլորովին իդուր տեղը: Յեվ չտեսար դու քո կյանքի յերազը՝ ընկեր Բուղյոննուն»:

Բայց յես անուժ եմ: Յես համարյա ընկնում եմ: Քիչ ե մնում սմբակների տակ ընկնեմ:

Լսում եմ, —կողքից ծիծաղում են. — Ե՛՛, զինվոր... շիլա քիչ ես կերել: Յերեգում ե, վոր սպիտակ շիլան այնքան ել յուղալի չի յեղել: Հը»:

Իսկ յես վոչինչ չեմ կարողանում ասել: Նույնիսկ ինչպես պետք ե հայհոյել ել չեմ կարող: Յես ուղղակի վայր եմ ընկնում:

Այդ ժամանակ կողքից մեկն ասում ե. —

— Բե՛ր, զինվոր, բարեկամիդ դիր ձիուսումին: Յես այդպես ել արի: Հիշում եմ, «Ճորհակալություն» ասացի և իմ խեղճ Զիկովին գցեցի ձիու տաք ուսին: Նա կախվեց ու ձեռներն ել քաշ արագ: Յես շարունակեցի գնալ:

Արդեն մթնեց: Արդեն վերեւում թարթում եյին աստղերը, յերբ մենք մտանք Լուգանսկի դավառի Մարեսկի դավառակի Բանտուրովո գյուղը:

Հիշում եմ, վոր մենք մի բակում ինչ վոր  
բանի եյինք սպասում։ Մի տեղ պահաներն են  
կանգնած, մի այլ տեղ Զիկովը պառկած եր  
դետնի վրա, ջրհորի մոտ, իսկ յնս պաղել եյի  
կողքին և լալիս եյի։

Գուցե իմ ջղեը քայքայվել եյին, յես հոգ-  
նել եյի, բայց ինձ համար ծանր եր նայել, թե  
ինչպես ե մեռնում իմ բարեկամը։

Նա զեռ շնչում եր: Բայց այնպես, գիտե՞ք,  
թույլ, դանդաղ։ Հառաջում եր, սկսում եր մը-  
ունչալ, դլուխն եր շարժում և նորից լռում։  
Քերակից ել այլսս արյուն չեր դալիս։

Իսկ դա վատ է։

Յես ասում եմ։—

— Զիկով։

Իսկ նա լռում է։ Գլուխն ել չի շարժում,  
աչքերը չի բանում։

Յես ասում եմ։—

— Զիկով... դե՛հ լով... մի խոռովի, —ա-  
սում եմ, —ամեն ինչ լավ կլինի։ Զե՞ վոր սխալ  
ե պատահել։ Զե՞ վոր սրանք մերոնք են, բուշ-  
յոննովցիները, աստղերով։

Վաղը մենք ինքներս, —ասում եմ, —խստղեր  
կկպցնենք, Զիկով և կզնանք Բուդյոննու հետ  
ծանոթանալու։ Այս ժամանակ յես կասեմ։

«Ծնկե՞ր Բուդյոննի, թույլ տվե՞ք ձեզ հետ  
ծանոթացնել իմ ընկեր Վասիլի Սեմյոնովիչ  
Զիկովին։ Նա առաջին հերոսն ե մեր յերկրագն  
դի վրա...», Զիկով, լսո՞ւմ ես։ Բուդյոննին քեզ  
կպատասխանի։ «Այո, —կասի, —լավ տղա յես,

քո տեսքը մարտական եւ, միայն թե դու պետք  
ե ծառայես վոչ թե սպիտակ սըիկանների մոտ,  
վոչ թե Դենիկինի մոտ, այլ ընկեր Զավարուխի  
նի հաստիկ ջոկատում»: Յեվ քեզ կուղարկի  
զորամասը: Դու, —ասում եմ, Զիկով, ուզո՞ւմ  
ես գոլ մեր զորամասը:

Հիմար բան եմ ասում իհարկե, վորովհետեւ  
Զիկովը չի լսում. փայտի պես լոել ե ու պառկել  
ջրհորի մոտ:

Այդ ժամանակ բացվում են դռները և տնից  
կանչում են.

— Բերեք գերիներին...

Իրը թե յե՞ս եմ գերի... Հապա մի մտածե  
ցե՛ք, բուղյոննովցին Բուղյոննուն գերի ընկավ:

Ինձ տանում են խրճիթ: Հասկանալի յե՞,  
խրճիթում հացի, բորշչի, նավթի հոտ ե գա-  
լիս, սրբազատկերների տակ կանդնած ե մի  
սեղան, սեղանի վրա՝ մի պտուկ կաթ և  
անդլիական մառվեր: Մեղանի մոտ նստած ե մի  
ջահել տղա կովկասյան շապիկով: Նրա կողքին  
նստած ե մեկ ուրիշը, կեսպիտով: Մեկն ել,  
միրուքամբոր, —լուսամուտի մոտ: Կային և  
ուրիշները, —յես չեմ հիշում:

— Հապա, —ասում են, — մոտեցիք,  
աղամինյակ:

Զիկովին դնում են յերկար նստարանի  
վրա, իսկ յես մոտենում եմ սեղանին:

Նրանք լոլորը վոտից-գլուխ դիտում են  
ինձ, կարծես յես մարդ չեմ, այլ հրաշք: Հետո  
սկսում են ակտ գընել:

— Աղղանո՞ւնդ, — հարցնում են:  
Յես ասում եմ.—

— Տրաֆիմով Պյոտր Վասիլեևիչ:  
ինչ՞ո, — հարցնում են:

— Չեմ կարող ձեզ բարձր պատասխանել:  
Կոկորուիս թանաք ե քսված:

— Թյու՛, — ասում են, — ինչ՛:  
Յես ասում եմ.—

— Ինչ՞ո:

Նրանք հարցնում են.—

— Շարքային դինվո՞ր ես:

— Այո, — ասում եմ, — ընկեր Զավարուխի-  
նի հատուկ ջոկատի մարտիկ:

— Վո՞նց թե, — ասում ե կովկսոյան բլու-  
զով տղան, դու զավարուխինցի՞ յես:

— Դե՛ ի հա՛րկե, ասում եմ:

— Ինչ՝ հիմար բան ե: Ընկերներ, վո՞րտեղ  
եք սրան վերցրել:

Իսկ նրանք պատասխանում են.—

— Սվաղում ե, ընկեր՝ կոմիսար: Մամոն-  
տովի դիվիդիայի զտարյուն հետախույզ ե:  
Ահա փաստաթղթերը :


Աւ սեղանի վրա յեն դնում Զիկովի զին-  
վորակական տոմսը:

Յես ասում եմ.—

— Ինչ կա վոր: Այդ Զիկովն ե: Փախած  
մամոնտովցի: Այդ ճիշտ ե, իսկ յես Զավա-  
րուխինի մարտիկ եմ: Յես զաղտնի ծրար եյի  
տանում ընկեր Բուղյոննուն:

— Ի՞նչպես եյիր տանում, հարցնում են:

—Նեղրին նստած—ասում եմ յես:  
—Ինչ՝ նեղր: Դու, —ասում են, աղավնյակ,



Աֆրիկայում չես: Դու, Ռուսական հանրապետության մեջ ես:

Այո, —ասում եմ, —յես գիտեմ, վոր Ռու-

սական հանրապետության մեջ եմ։ Իսկ Նեղը  
ձի յէ։

— Այո՛, իսկ ո՞ւր ե քո ձին։

— Զրասույզ յեղավլ։

— Զի՞ն ջրասույզ յեղավ։

— Այո՝ ասում եմ, —յերեակայեցեք . . .

փոքրաց չափից դուքս ձգեցի, նա յել ջրի մեջ  
վաս զգաց իրեն։

— Ա՛յ քեզ հրաշք, —ասում են, —ե՛, ու՞ր ե  
քո ծրաբը։

— Ուր ե՛, —ասում եմ։ Հիշում եմ, սարսա-  
փելի չարացա։ Ու՞ր ե, —ասում եմ, —կերիւ։

— Հրհում են . . .

— Հա՛, հա՛, հա։

Չեն հավատում, դիտե՞ք . . . իմ վոչ մի խոս-  
քին չեն հավատում։ Կարծում են թե հիմա-  
րություններ եմ դուքս տալիս։

Եես ասում եմ . . .

Ա՛յ, ամբողջ մեջքս ծեծած ե, տեսնո՞ւմ եք։  
Եես ի՞նքս եմ շամփուրով ինձ թակել, ինչ ե։

Այստեղ յես շապիկս վերե քաշեցի ու ցույց  
տվի թե նրան, վորը կովկասյան շապիկ եր  
հաղած, թե նրան, վորը կեպկա յեր ծածկել և  
թե լուսամուտի մոտ կանգնած միրուքավորին։

Լուսամուտի մոտ կանգնած միրուքավորն  
ասում ե . . .

— Հ'մ, այո։ Ինքն իրեն չեր կարող այսպես  
թակել։ Այդ ճիշտ ե։ Տես թե դրողի տարած-  
ները վոնց են ձաղտել։ Ո՞վ ե արել։

— Մամոնտովի կազմակները։

— Հմ՝,—ասում են: Ի՞նչ՝ անենք սրա հետ:  
Դուցե խոկապիս նո մերն ե: Ո՞վ դիտե: Փաս-  
տաթղթեր ունե՞ս:

ԵԽԱ ասում եմ.—

— Չունեմ: Բոլորը կերա: Դուք,—ասում  
եմ,— ամենից լավ ե հեռաղիր ուղարկեք ընկ.  
Զավարուխինին: Նա կապատասխանի:

— Վո՞նց կլինի, —ասում են: — Յերեք որ ե  
Զավարուխինից տեղեկություն չկա: Սատա-  
նան դիտե վորտեղ ե և ինչ ե պատահել նրան:

— ԵԽԱ, —ասում եմ, — զիտեմ վորտեղ ե  
նա և ինչ ե պատահել նրա հետ: ԵԽԱ նրանից  
բոլոր տեղեկությունները տանում եմ ընկեր  
Բուդյոննուն: Խողիք ինձ, խնդրում եմ, յես  
կշարունակեմ դնալ:

— Հը՛, ի՞նչպես, —ասում են վոմանք:

— Ի՞նչ՝ անել, — ասում են մյուսները:

Ու տեսնում եմ, — ուսերն են թափ տալիս  
ե ձեռքերն ահա այսպես են անում: Յերեսում  
ե վոր կթողնեն: Արևո վկա կթողնեն:

Բայց այստեղ հասկանո՞ւմ եք, նորից ար-  
կած պատահեց:

Հանկարծ, յերեակայո՞ւմ եք, բակում,  
լուսամուտի յետե սկսվեց ինչ—վոր լազմուկ:  
Հետո ելի ինչ-վոր ձայն: Նույնիսկ ինչ-վոր  
յերդեցողություն: Ու չգիտեմ ինչու իմ տը-  
րամադրությունը վատացավ: Ի՞նչ—վոր բան  
նախազգացի: Վատ զգացի ինձ:

Իսկ այն կոմիսարը, վորը կովկասյան շա-  
պիկ եր հագել, հարցնում ե: —

— Այդ ի՞նչ ե պատահել բակում:

Միրուքավորը դարձավ գեղի լուսամուտն  
և ասում ե. —

— Դա այն դժբախտ ծերուկն ե խղմկում:  
— Ինչ՝ դժբախտ ծերուկ:

— Այն մեղվազահը, վորի կնոջը մորթել  
են կամավորականները:

— Հա՞,—ասում ե կոմիսարը: — Ինչու՞ յէ  
նա թափառում այստեղ: Ինչո՞ւ նրան ներս չեն  
թողնում: Գուցե նա քաղցած ե, թող տղերքը  
կերակրեն նրան:

Դուռը բացվեց և ինքը, այդ դժբախտ  
մեղվապահը ներխուժեց խրճիթ:

Եես նրան իսկույն ճանաչեցի: Վո՞նց չճա-  
նաչեյի նրան, յերբ մեկ որում նա այնքան վա-  
խեցրել եր ինձ: Դա հենց՝ այն գեղջուկն եր,  
խելադարը:

Հիմա նա արդեն ուղղակի սարսափելի  
յեր: Հագուստը բոլորովին պատառում ել եր:  
Ձեռներն ու վոտներն արյունակալել եյին,  
կարծես յերեք ժամ փշերի մեջ եր թագնվել:  
Գլխավորը, — նրա աչքերը բոլորովին սարսա-  
փելի եյին: Այդպիսի աչքերով կարելի յեր  
վսխեցնել մարտական հեծելազորի մի ամբողջ  
գունդ: Քիչ եր մնում վախից նստեյի հատակին:

Իսկ նա ինձ տեսավ, սկսեց թափահարել  
ձեռներն և գոռալ:

— Հը՞,—գոռում ե, — ահա նա, ընկերներ,  
— ասում ե: Բոլշևիկներ, խփեք նրան, խփեք  
սատանայի ճուտին: Հենց այս րոպեյիս գնդա-  
կահարեցեք ամենայերկար նագանով:

— Իսկ դու, —ասում ե կոմիսարը, —ուու  
մի՞թե նրան ճանաչում ես:

— Ճանաչում եմ, —ասում ե, —վո՞նց չեմ  
ճանաչում: Հենց նրանք եյին, վոր խրնիթս վա-  
ռեցին և կնկանս, պառավիս ել սվինով խոցե-  
ցին: Նրանք, շները, հետո անտառում կապե-  
ցին ինձ սանձով...

— Ի՞նչ, — հարցնում ե կոմիսարը, — ինչ  
ասի՞ր:

Իսկ յես ասում եմ.—

— Վո՞նց թե սանձով: Ստում ե, վոչ թե  
սանձով, այլ դուիսով...

— Դրանք զենելիս Մամոնտովի սուրհան-  
դակներն են: Դրանք, —ասում ե խելագարը, —  
գնում եյին կուրբատովո, լուր եյին տանում:  
Ես իմ ականջներովս ամեն ինչ լսեցի, թեև  
նրանք ինձ կապեցին սանձով և խանդակը գը-  
ցեցին:

— Սուտ մի՞ խոսիր: Ինչ՝ ես դվիսիցդ դուրս  
տալիս: Իսկի յել սանձով մենք քեզ չենք կա-  
պել:

Կոմիտասը թե՝

— Բավական ե, մի բլրլա: Ավելի լավ ե,  
անպիտան, ասա, ինչու եյիր կուրբատովո  
գնում:

Յես ասում եմ.—

— Ի՞նչ կա վոր: Այդ ճիշտ ե: Իսկապես, վոր  
մենք գնում եյինք կուրբատովո, Բայց մենք  
գնում եյինք դիտմամբ... Մենք գնում եյինք...

Յես շփոթվեցի: Վախեցա, հասկանո՞ւմ եք  
և յերեվի կարմրեցի:

— Գնում եյինք մենք, — ասում եմ, — վոչ  
այնաեղ, այլ դեպի այստեղ։ Մենք դնում  
եյինք...

— Սպասի՛ր, — զոռում ե կոմիսարը, — բա-  
վական ե։

Հետո նա ասում ե ծերուկին։ —

— Լավ, պապի։ Շնորհակալություն։ Կա-  
րող ես գնալ։ Առա կարմիր բանակայիններին,  
վոր քեզ բան տան ուտելու։ Գնաս բարով։

Նա սեղմեց խելազարի ձեռքն և վերջինս  
դնաց։ Բոլոր տղերքը նստեցին անկյունում,  
սրբապատկերների տակ և սկսեցին խորհրդակ-  
ցել...

Ե՞ւ, ինքներդ դիտեք, թե ինչպիսի ժամա-  
նակ եր։ Ժամանակը խնայել եր պետք։ Յերկար  
դեսողեն անելու հնար չկար։

Փափսացին տղերքը, մտածեցին, թղթի  
վրա ինչ-վոր բան գրեցին և արդեն կարդում  
են։ —

— Տրաֆիմով Պյոտրին, թշնամու հետա-  
խույզին ու լրտեսին գնդակահարել։ Դատավոր-  
ճիոն իսկույն ի կատար ածել։

Յերեակայո՞մ եք իմ դրությունը։ Հիշում  
եմ միայն վոր ասացի։ —

— Հըմ... բուղյոննովցին բուղյոննուն  
գերի ընկապ...

Այդ ժամանակ բոլորը վեր կացան։ Մեկը  
դնաց խրճիթից, մյուսը սկսեց խոսել զինվո-  
րական դործերի մասին։ Յերեք թե չորս հոգի  
կողքերիցս բռնած՝ ինձ տժրան բակ։ Հրամա-

յեցին կանգնել պատի մոտ:

Հիշում եմ, ասացի նրանց...—

— Բակում չարժե: Ի՞նչու բակը կեղտու-  
տել: Հետո, — ասում եմ, — դեղջուկը կզզվի:  
Դուք մի վորեն հեռու տեղ...

— Լավ, — ասում են, — կանգնիր: Ժամանակ  
չկա հեռու տանել:

Յես ասում եմ...—

— Ի՞նչ արած... յես կհանվիմ:

— Հարկավոր չե, — սբառասխանում են:

— Վո՞նց թե, — ասում եմ, — բա շորերս կոր-  
չե՞ն: ԶԵ՞ւ, այդ լավ չի լինի... Ավելի լավ ե,  
տղերք, յես իմ շորերը ձեղ տամ: Իմ կոշիկնե-  
րը — ասում եմ, — հրաշալի յեն, շատ լավն են,  
հը:

— Հարկավոր չե, — ասում են:

— Անգլիական կոշիկներ չենք ուզում:

Թող անտանտան հագնի նրանց:

Սրիկաներ, — ասում եմ, — անտանտա՛:  
Դուք ինքներդ' եք անտանտա: ԶԵ՞ւ վոր սրանք,  
— ասում եմ, — անգլիական կոշիկներ չեն: Սրանք  
Մոսկվայի կոշիկներ են: «Բողատիր» գործարա-  
նից:

Յես արագությամբ նոտում եմ դետնին և  
հանում իմ այդ «Բողատիրի» կոշիկները:

— Վեցըրեք, ընկերներ, — ասում եմ, —  
հագեք վորակես հիշատակ:

Կոշիկներս նետում եմ նրանց:

Հանում եմ վոտափաթաթանո:

Յել... ի՞նչ եք կարծում: Եհ, այս բանը

մոռանալու չե՛: իմ պատոված, քրտնած վոտա-  
փաթաթանի մեջ յես տեսնում եմ ինչ-վոր  
բան, թղթե դնդիկ: Յեվ նրա վրա ինչ-վոր  
բան ե դրած:

Բաց արի և տեսա տառերը: Բայց թե ինչ  
տառեր եյին, այն ժամանակ յես չդիտեյի:

Յես ասում եմ.—

— Հապա, տղերք... Յես անգրիսղետ եմ:  
Կարդացեք ինչ ե դրած այստեղ:

Նրանք ասում են.—

— Ինչու պիտի կսրդանք: Կարդալու կո-  
րիք չունենք: Կանզնի՛ր պատի մոտ:

Յես ասում եմ.—

— Ինչ՝ ե, դժվա՞ր ե ձեզ համար, թե  
ինչ... Յես պատի մոտ կը կանգնեմ: Կարդա-  
ցեք ինչ ե ասած այստեղ: Կարելի յե մի վո-  
րեւ կարեվոր բան ե ասված...

Դտնվեց մեկը վոր վառեց լուցկին և սկը-  
սեց կարդալ: Սկսեց շրթունքները շարժել և  
բառեր կազմել:

Հետո ասում ե.—

— Այստեղ առհասարակ դրված ե գալո...

— Ինչպե՞ս, — ասում եմ յես, — ինչ դալո:

— Այո, — ասում ե, — դալո... Մյուսն ե

մոտենում: Յերբորդը: Սկսում են կարդալ:

— Այո, — ասում են, — ընդհանրապես  
«նումի... Գալո կ.կ...»

Հետո ասում են.—

— Բայց ե այնպես կասկածելի յե: Այստեղ

կնիք ել և խփված յեղել... Յեկեք, տղերք, —  
ասում են, — կանչենք Բելոպոլսկուն:

Գնացին խրճիթ: Մի քանի վայրկյանից հետո  
առ վերադարձան կոմիսարի հետ: Կովկասյան  
շաղիկով կոմիսարը բարձրցած ե:

— Ել ի՞նչ Գալո յեղա, — ասում ե: Հապացույց տվեք:

Հիշում եմ, ինչպես վերցրեց պատառոտված  
ու ճիշտված իմ թուղթն և կացրաց. —

— «Միխայլովիչ Բուդյոննուն... Առաջին հեծելազորային բան... Ռ.Կ.Բ. վեցերորդ  
դիվիզիայի շտաբ»:

Ե՞ւ, թե ինչ յեղավ այստեղ, կարելի յե և  
չասել:

Կոմիսար Բելոպոլսկին ձեռների մեջ առավ  
գրուիր:

— Այս ինչ՝ ասում ե, — այս ինչ բան ե:  
Յես ասում եմ. —

— Այդ այն ե, ինչ վոր մնաց ծրարից, վորը  
յս տանում եյի Լուգանսկ, Բուդյոննուն:  
Մնացածը, — ասում եմ, — յես կերա:

Այս՝ ինչ յեղավ այստեղ:

Կոմիսար Բելոպոլսկին դոռում ե. —

— Սպասե՛լ: Դատավճիռը վերացվում ե:

— Հետո մոտենում ե ինձ, կուանում ե և  
ձեռքը դնում ուսիս:

— Ընկեր՝, — ասում ե, — ներիր: Քիչ մնաց  
քեզ դրախտ, աստուծո մոտ ուղարկելինք:

Յես ասում եմ. —

— Վոչինչ, ինձ ձի տվեք, յես կուանամ

Բուզյաննու մոտ : Յես շատ կարևոր ուղերատիվ  
տեղեկություններ եմ հաղորդելու նըան :

Իսկ ինքս , հասկանո՞ւմ եք զետնի վրայից  
չեմ ել կարողանում վեր կենալ : Նստած եմ  
զետնին առանց կոչիկների և վոտավոտթաթա-  
նովս սրբում եմ քրտինքս : Քրտնախաշ եմ յե-  
ղել , հասկանո՞ւմ եք... Վո՞նց քրտնախաշ չը-  
լինես :

Հինգ րոպէ հետո դարպասի մոտ գրգռաց  
սայլը : Յերկու ձի յեր լծած : Զիերը հրաշալի  
եյին , թռչկոտում եյին , սմբակներով զետինն  
եյին փորում :

Ինձ նստեցրին սայլին : Խոտ փոեցին : Տաք  
եր , փափուկ...

Հիշում եմ , աչքերս մի քիչ վհսկել եյի ,  
յերբ լսեցի , —ընկեր Բելոպոլսկին հրամայեց .—  
— Լուղարնսկ , բանակի հրամանատար Բու-  
դյոննու շահսրբ :

Այդ ժամանակ յես բարձրացնում եմ պր-  
լուխս :

— Լսեցի՞ք , —ասում եմ , —Զիկովին ել  
դրեք սայլին :

Զիկովին ել ըերին ու պառկեցրին իմ կող-  
քին : Հիշում եմ , ինչպես դլխովս բոթեցի կող-  
քը : Լոռում ե : Վոչ մի ձայն—ձպտուն , վոնց վոր  
փայտ լինի :

Այսուեղ իմ կառաղանը շխկացրեց մտրակը ,  
սայլը շարժվեց և յես կորցրի հիշողությունս :  
Մի խոռօքով , քնեցի :

Հիշում եմ , յերազ տեսա :

Իբր թե մենք զանվաւմ ենք Յելիզավետ-  
պրադ քաղաքում։ Իբր թե կոչիկներս նոր են։  
Յել իբր թե վայնկա Լիչկովից, մեր ավագից  
վոտափաթաթաններ եմ զնում։ Իբր թե նա  
դրանց համար ուզում ե մեկ ութերորդ Փունդ  
մախորկա և յերեք կամ չորս կտոր շաքար։ Իսկ  
յես տալիս եմ մեկ ու կես բաժին հացս և ել  
վոչինչ, վորովհետեւ մախորկա չունեմ։ Յես չեմ  
ծխում։ Իբր թե յես շատ եմ ուզում գնել վոտա-  
փաթաթաթանները։ Հասկանու՞մ եք, նրանք ինչ-  
վոր մի ուրիշ տեսակի յեն։ Փափուկ։ Իսկը պա-  
րսների յերեսարրիչներ։

Եւս ասում եմ։ —

— Ֆունդ ու կես կտամ։ Հացը շատ լավն  
է։ Համարյա թարմ ե։

Իսկ Լիչկովն ասում ե։ —

— Չե՞... ձեռք չի տալի՞...

Ել չեմ հիշում, վոնց համաձայնվեցինք գնի  
համար, միայն թե դնեցի։ Գնեցի այդ վոտա-  
փաթաթաթաններն ու սկսեցի փաթաթել վոտ-  
ներս։

Փաթաթում եմ կամացուկ, հանդիսա, և  
հանկարծ Զավարուխինն ե գալիս։ Գալիս ե և  
իբր թե վերնաշապկի կոճակներն ե հաշվում։  
Ասում ե։ —

Տրափիմով, մեզ լուր հասավ, վոր  
վոտներիդ վրա կոշտուիներ ունես։ Ճիշտ ե  
դա։

— Այո՞,—ասում եմ, —կան փոքրիկ կոշ-  
տուիներ։

— Հըմ, — ասում ե, — մեր հատուկ բաժինը  
վորոշել ե այդ առթիվ քեզ գնդակահարել:  
Յես ասում եմ. —

— Ինչպես ուղում եք, ընկեր Զավարուխին:

— Դա, — ասում եմ, — ընկեր Զավարուխին, ձեր անձնական դործն ե: Կարող եք գնդակահարել:

Յել սկսում եմ, հասկանում եք, կամացուկ, հանդիստ հանել վոտափաթաթաններս: Հանում եմ ու մտածում: —

— Հ'մ, կյանքում դառնություն ել ե լինում...

**Զարթնում եմ:**

Պառկած եմ սայյի վրա: Հայտնի չե ինչու սայյը կանգնած ե: Մութ ե: Ինչ-վոր կամուրջ կամ ուղեկտ կտ: Կառապանս նստած ե իր տեղում ու ծխում ե:

Զիկովը կողքիս ե: Խոմփում ե իմ Զիկովը վերջին ույժերը հավաքած ե յերեակայեցեք, նրա ամբողջ դեմքն արյունակալվել ե: Քներակից բղխում ե ու բղխում: Հոսում ե շարունակ:

Ուզում եյի վեր կենալ ու կառապանին տսել, վոր նրան վորեե ողնություն ցույց տրը-վի, բայց այնպես վախեցա, վոր գիտակյու-թյունս կորցրած՝ մեկնվեցի ու քնեցի:

Յերկրորդ անդամ զարթնեցի, արդեն ուրիշ տեղում:

Պառկած եմ փափուկ անկողնում: Գլխիս վերին հանդարտ վառվում ե լամպը: Փորիս վրա

ինչ-վոր տաք բան և դրված, ինչ-վոր անոթ, իսկ կողքիս աթոռի վրա նստած և շիկահեր միքնոի, սպիտակ խալաթով:

Յես ասում եմ .—

— Ա՞վ ես զու, շիկամա՞զ:

Նա ասում ե:

— Յես բժիշկ եմ :

— Իսկ յես՞ :

— Իսկ զու հիվանդանոցում ես: Դու հիվանդ ես: Պառկիր, խնդրեմ, և մի շարժվիր: Հենց մի քիչ առաջ քո ստամոքսում գտնել են կնքամոմ, թանաք և ելի ինչ-վոր բան:

Յես ասում եմ .—

— Այդուես: Իսկ թուղթը դտե՞լ են:

— Այո՞,—ասում ե,—և շատ:

Յես ասում եմ .—

Ամեն ինչ հասկա՞ցան:

— Ի՞նչ:

— Պարզեցի՞ն բոլորը, ինչ վոր գրված եր այսուղ, թե՞ ջնջվել եր գրվածը:

— Վո՞չ, —ասում ե, —այդ թուղթը վեր եր ածվել անվորոշ գանգվածի:


— Ափսոս՝,—ասում եմ յես:

— Իսկ այժմ քեզ հարկավոր ե բժշկվել:

— Ահա, — ասում ե, — կե՞ր խնդրեմ այս պիրամիոնը:

Յես կերա: Նա նստեց, ուղղեց անոթն ու գնաց:

Գլուխս շուռ ավի, վոր տեսնեմ ինչ ե կատարվում: Տեսնում եմ, պառկած են հիվանդ-



ները : Քնած են : Վամանք հառաջում են : Մեկը  
պնդվինթում եւ յերազում :

Ինձնից յերբորդ մահնակալի՛ վրա, հենց  
վառարանի մոտ տեսնում եմ մի ծանոթ մոռթ :

Յերեակայեցեք, Զիկովն ե :

Սակայն ինչ՝ և անում նա :

Գլուխը վաթաթված ե : Միայն քիթն ե յե-  
րեսում : Իսկ ինքը, այդ Զիկովը կախվել ե մահ-  
ճակալից և ինչ-վոր բան ե անում : Ինչ-վոր  
բան է խոթում հատակի անցքը :

Յես ասում եմ .—

— Զիկով :

Նո կառով չոփի բարձրացնում ե գլուխը .—

— Հը՞ :

Յես ասում եմ .—

— Ինչ՝ ես անում այդտեղ :

— Յես՝ :

— Այո :

— Յես, — ասում ե , — պիրամիդոն եմ խո-  
թում այստեղ : Հասկանու՞մ ես, — ասում ե , —  
նա ինձ չստ ե զզվեցրել : Յերեկի բոլոր բանակ-  
ներում , — ասում ե , — պրամիդոնով են բժշ-  
կում : Յեօ կաթօսում եմ , վոր բժիշկները դեռ  
Քրիստոսի ծննդից առաջ պիրամիդոնով եյին  
կերակրում զինվորներին :

— Հիմա՞ր, դու գեռ կենդանի՞ յես :

— Բա վո՞նց , — ասում ե :

— Ուրա՞խ ես :

— Բա վո՞նց , — ասում ե — Տամբովի խըրտ-  
վիլակ . . .

Ե՛հ, յես ուզում եյի նրան մի լով հայեցիել,  
ուզում եյի նույնիոկ բարձով խփել, բայց թու-  
լացա, թուլացա, հասկանու՞մ եք, դողդողացի  
ու ընկա բարձի վրա: Քնեցի:

Առավոտյան արևելի ճառադայթները ըն-  
կել եյին հենց աչքերիս: Յես դարձնում եմ  
դեմքս, հիշում եմ, շուռ եմ տալի գլուխս և հան  
կարծ տեսնում եմ ծանոթ մի դեմ:

Բարձրահասակ, լայնաթիկունք, բեխերով մի  
քեռի կանգնիսծ եր դռան մոտ և ինձ եր նայում:

Հասկանու՞մ եք, յես նրան իսկույն ճանա-  
չեցի:

«Ո՞ֆ, — մտածում իմ, — մեր յեղբա՛յը  
Բուղյոննի, զու ի՞նչպիսի բեխ...»

Իսկ նա մոտենում է իմ մահճակալին, հա-  
նում ե իր շանթարգելը և ասում,

— Հը՛, բարե:

Յես մի քիչ բարձրանում եմ ու ասում. —

— Ընկե՛ր Բուղյոննի...

Յես նույնիսկ բառերը կուլ տվի:

— Ընկե՛ր Բուղյոննի, ընկեր Զավարուխի-  
նի հատուկ ջոկատը շրջապատված է թշնամու-  
կողմից: Զախից, — ասում եմ, — նեղում ե Շկու-  
րոն, աջից — Մամոնտովը: Զե, — ասում եմ —  
գախից Մամոնտովը... Զախից — ասում եմ, —  
Ուլադայը... ներողութիւն — ասում եմ, — իս-  
կոց Ուլադայը ...

Յես մոռացա: Գլխիկ մեջ, հասկանու՞մ եք  
ամեն ինչ խառնվեց: Լոեցի: Պարկեցի: Իսկ

ընկեր Բուդյոննին, հիշում եմ, ձեռքը դրեց ճա-  
կատիս և ասում եմ.—

— Սկսում ե ջերմել: Անհրաժեշտ ե կոմպ-  
րես գնել:

Բայց այստեղ յես ինչ-վոր բան հիշեցի,  
ույժիցո վեր բարձրացա և ասում եմ,—

— Ընկեր Բուդյոննի, թույլ տվեք ձեզ  
Հետ ծանոթացնել ընկերոջս, —Վասիլյի Սեմյո-  
նիչ Զիկովին: Առաջին հերոսն ե յերկրաէնդի-  
վրա:

Բուդյոննին ծիծաղում ե ու ասում .—

— Այդ վո՞ր հերոսն ե:

— Այ՛, նա, —ասում եմ, վո՞րի գլխի կեսը  
փաթաթված ե: Ա՛յ, նա ձեզ ժպտում ե:

— Հը՞մ, —ասում ե:

Յեվ գնաց զեղի Զիկովի մահճակալը:

Թէ նրանք ինչպես ծանոթացան, յես չեմ  
հիշում: Ավելի պարզ տսած չեմ տեսել: Քնած-  
ելի:


Յերկու շաբաթ հետո դուրս յեկա հիվան-  
դանոցից և վերադարձա դիմիզիա:

Հետո սկսվեց ձմեռը: Յեվ հենց նոր տա-  
րուն ինձ նվեր յեկավ Մոսկվայից .—

Կարմիր գրոշի շքանշան...

Ինչու՞ համար, —հապա մտածեցեք...





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045475

ԳԻՒԾ 75 Կ

[304]

Л. ПАНТЕЛЕЕВ

Ա Տ  
Ա 8470

# ПАКЕТ

ГИЗ ССР АРМЕНИИ ЭРИШАНЬ

